ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

**Գործառութային պարտականություններ**

**Առաջատար**

*Հարց* 1.(04.3436) Քրեակատարողական հիմնարկի բժիշկ մասնագետը պետք է այցելի պատժախցում գտնվող կալանավորված անձին կամ դատապարտյալին

1. ամեն օր
2. 2 օրը մեկ անգամ
3. 3 օրը մեկ անգամ

*(1)*

*Հարց* 2.(04.3437) Ինչ պետք է ձեռնարկի բժիշկ մասնագետն ամեն անգամ , երբ գտնում է, որ կալանավորված անձի կամ դատապարտյալի հետագա գտնվելն ազատազրկման վայրում կհանգեցնի վերջինիս առողջության վատթարացման

1. անհապաղ տեղափոխել հիվանդին քաղաքացիական հիվանդանոց
2. զեկուցագրով տեղեկացնել հիմնարկի պետին հիվանդի տեղափոխման մասին
3. հրավիրել մասնագետներ տեղում որոշում կայացնելու համար

*(2)*

**Կրտսեր**

*Հարց* 3.(04.3438) Հոգեկան հիվանդությամբ տառապող կալանավորված անձը կամ դատապարտյալը պետք է պահվի

1. նրանց համար հատուկ նախատեսված բուժական հաստատությունում կամ բաժանմունքում
2. քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման ստացիոնարում
3. առանձին խցում

*(1)*

*Հարց* 4.(04.3439) Կալանավորված անձանց և դատապարտյալների նախնական բժշկական զննումը կատարվում է

1. բժշկի ներկայությամբ
2. հիմնարկի պետի ներկայությամբ
3. պատասխանատու հերթապահի ներկայությամբ

*(1)*

*Հարց* 5.(04.3440) Քրեակատարողական հիմնարկ նոր բերված կալանավորված անձանց ֆլյուրոգրաֆիան կատարվում է

1. 24 ժամվա ընթացքում
2. 48 ժամվա ընթացքում
3. 72 ժամվա ընթացքում

*(3)*

*Հարց* 6.(04.3441) Քրեակատարողական հիմնարկում դեղորայքը և բժշկական պարագաները պահվում են

1. բուժմասի չհրկիզվող պահարանում
2. վարչական մասնաշենքի ազդանշանային համակարգով ապահովված սենյակում՝ մետաղյա կողպվող պահարանում
3. պատասխանատու հերթապահի մոտ
4. պահեստային մասնաշենքում

*(2)*

*Հարց* 7.(04.3442) Քրեակատարողական հիմնարկում բժիշկ մասնագետը հիվանդին վերակարգից կամ աշխատանքից կարող է ազատել

1. 5-8 օր
2. 6-12 օր
3. ոչ ավելի, քան 3 օր

*(3)*

*Հարց* 8.(04.3443) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը փոխանցվում է

1. համբուրվելիս
2. կենսահեղուկների միջոցով
3. մոծակի խայթոցով

*(2)*

*Հարց* 9.(04.3444) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդը կարող է վարակիչ լինել

1. ՁԻԱՀ-ի զարգացումից հետո
2. վարակման պահից 1-2 տարի հետո
3. վարակման պահից

*(3)*

*Հարց* 10.(04.3445) ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի միջև տարբերությունը

1. դրանց հարուցիչները տարբեր են

2. ՁԻԱՀ -ը ՄԻԱՎ -ի վերջնական փուլն է
3. ՄԻԱՎ-ը ՁԻԱՀ-ի վերջնական փուլն է

*(2)*

*Հարց* 11.(04.3446) Կարող է արդյոք առողջ տեսք ունեցող մարդը լինել ՄԻԱՎ-ով վարակված
1. այո
2. ոչ
3. ոչ միշտ

*(1)*

*Հարց* 12.(04.3447) Թմրամոլների հաշվառման վերաբերյալ տեղեկությունները
1. գաղտնի չեն
2. տրամադրվում են հասարակական լայն զանգվածներին
3. գաղտնի են: Դրանք կարող են տրամադրվել միայն օրենքով նախատեսված դեպքերում

*(3)*

*Հարց* 13.(04.3448) Թմրամիջոցներ որոշ ժամանակ չգործածելուց հետո դրանց կրկնակի օգտագործումը
1. ոչ մի կապ չունի լայնորեն տարածված այն մտքի հետ, թե նման մարդկանց մոտ բացակայում է կամքի ուժը կամ հոգեկան թուլության արդյունք է
2. անմիջական կապ ունի լայնորեն տարածված այն մտքի հետ, թե նման մարդկանց մոտ բացակայում է կամքի ուժը կամ հոգեկան թուլության արդյունք է
3. մասնակիորեն կապ ունի լայնորեն տարածված այն մտքի հետ, թե նման մարդկանց մոտ բացակայում է կամքի ուժը կամ հոգեկան թուլության արդյունք է

*(1)*

*Հարց* 14.(04.3449) Կախվածությունը կամ կախվածության համախտանիշը
1. «մոլի հակվածություն» հասկացության տեխնիկական անվանումն է
2. ինքնասպանության անվանումն է
3. այլ մարդկանց ցանկություններին մշտական ենթարկվելն է

*(1)*

*Հարց* 15.(04.3450) Ֆիզիոլոգիական զրկանքի համախտանիշն ի հայտ է գալիս, երբ
1. չարաշահվում է հոգեներգործուն նյութի գործածումը
2. դադարեցվում կամ նվազեցվում է հոգեներգործուն նյութի գործածումը
3. գերդոզավորվում է հոգեներգործուն նյութի գործածումը

*(2)*

**Առաջատար**

*Հարց* 16.(04.3451) Հոգեներգործուն նյութերի ընդունումը համատեղ ներարկիչներով հանդիսանում է այնպիսի վարակների տարածման հիմնական ճանապարհ, ինչպիսիք են

1. սյարդի ցիռոզը և քաղցկեղը
2. C հեպատիտը և ՄԻԱՎ-ը
3. դիզենտերիան և կոլիտը

*(2)*

**Կրտսեր**

*Հարց* 17.(04.3452) Նիկոտինը

1. ծխախոտ է
2. հոգեներգործուն նյութ չէ
3. հոգեներգործուն նյութ է

*(3)*

**Առաջատար**

*Հարց* 18.(04.3453) Կանաբիսի ազդեցությամբ առաջանում է

1. ժամանակի ընկալման դանդաղեցում, ընդհանուր թուլություն և զգացողությունների նկատմամբ զգոնության սրացում
2. ժամանակի ընկալման արագացում,առույգություն և զգացողությունների նկատմամբ զգոնության բթացում
3. ՄԻԱՎ

*(1)*

*Հարց* 19.(04.3454) Կոկաինը

1. նյարդային համակարգի հզոր խթանիչ է, որը կարող է ընդունվել ներքքային շնչման ճանապարհով
2. բույս է
3. նյարդային համակարգի հզոր խթանիչ է,որը կարող է ընդունվել ներքքային շնչման, ներերակային ներարկման կամ ծխելու ճանապարհով

*(3)*

**Կրտսեր**

*Հարց* 20.(04.3455) Հղի կին դատապարտյալների և մինչև 2 տարեկան երեխա ունեցող կանանց փոխադրումը այլ քրեակատարողական հիմնարկ կամ հիվանդանոց կատարվում է

1. ընդհանուր կարգով

2. այլ դատապարտյալներից մեկուսացված
3. տեղափոխում չի կատարվում

*(2)*

*Հարց* 21.(04.3456) Եթե երեխան ծնվում է ազատազրկման վայրում, նրա ծննդյան վկայականում կատարվում է նշում ծննդյան վայրի /կալանավայրի/ վերաբերյալ
1. ոչ
2. կնոջ ցանկությամբ
3. այո

*(1)*

*Հարց* 22.(04.3457) Քրեակակատարողական հիմնարկում գտնվող կանայք բժիշկ-մանկաբարձի կողմից ենթակետն ստուգման առնվազն
1. տարեկան 1 անգամ
2. տարեկան 3 անգամ
3. տարեկան 2 անգամ

*(1)*

*Հարց* 23.(04.3458) Կանանց համար նախատեսված քրեակատարողական հիմնարկները
1. ունեն հղի կանանց և ծննդկաններին խնամելու համար մասնաշենքեր
2. չունեն հղի կանանց և ծննդկաններին խնամելու համար մասնաշենքեր
3. հղի կանանց և ծննդկաններին խնամելու համար նրանց տեղափոխում են քաղաքացիական հիվանդանոց

*(1)*

*Հարց* 24.(04.3459) Հացադուլ հայտարարած, կամ բուժումից հրաժարվող կալանավորված անձի կամ դատապարտյալի բուժման ընթացքին միջամտելու կամ չմիջամտելու վերաբերյալ վերջնական որոշում է կայացնում
1. քրեակատարողական հիմնարկի պետը, բժշկի խորհրդով
2. քրեակատարողական հիմնարկի պետը
3. բուժող բժիշկը

*(3)*

**Առաջատար**

*Հարց* 25.(04.3460) Քրեակատարողական հիմնարկում հացադուլի դեպքում բժիշկ մասնագետը պարտավոր է
1. հարգել հիվանդի՝ ինքն իրեն տնօրինելու իրավունքը

2. կատարել հացադուլավորի հարկադիր սնուցում

3. դիմել վարչակազմի օգնությանը

*(1)*

*Հարց* 26.(04.3461) Քրեակատարողական հիմնարկում բժիշկ մասնագետը պարտավոր է

1. մասնակցել խուզարկումներին

2. իրականացնել ստուգումներ կալանավորված անձանց և դատապարտյալների սննդի որակի, քանակի և բաշխման պայմանների վերապահպանման հարցերով

3. մասնակցել հարկադրանքի միջոցառումներին

*(2)*

**Կրտսեր**

*Հարց* 27.(04.3462) Կալանավորված անձի կամ դատապարտյալի բժշկական քարտը պահվում է

1. կալանավորված անձի կամ դատապարտյալի մոտ

2. քրեակատարողական վարչությունում

3. քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնում կամ բաժանմունքում

*(3)*

*Հարց* 28.(04.3463) Կալանավորված անձի կամ դատապարտյալի բժշկական քարտում պարունակվող տեղեկություններին կարող են ծանոթանալ

1. կալանավորված անձի կամ դատապարտյալի գրավոր համաձայնությամբ՝ նրա կողմից մատնացույց արված անձինք

2. քրեակատարողական հիմնարկի վարչակազմը

3. դատարանը

*(1)*

*Հարց* 29.(04.3464) Քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի ստացիոնարում կալանավորված անձի կամ դատապարտյալի հետազոտությունը և բուժումը իրականացվում է

1. մինչև 10 օր տևողությամբ

2. մինչև 14 օր տևողությամբ

3. մինչև 7 օր տևողությամբ

*(2)*

*Հարց* 30.(04.3465) Քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի դեղորայքը և բժշկական պարագաները պահվում են

1. հիմնարկի բժշկական սպասարկման բաժնում
2. հիմնարկի վարչական շենքի ազդանշանային համակարգով ապահովված վայրում
3. բժշկի մոտ

*(2)*

**Առաջատար**

*Յարց* 31.(04.3466) Որ դեպքում է անհրաժեշտ դատապարտյալի շտապ հոսպիտալացում «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի հոգեբուժական բաժանմունք

1. հիվանդը գանգատվում է դյուրագրգռությունից, վատ ինքնազգացողությունից, լարվածության, տագնապի զգացումից, անքնությունից: Վարքը կոնֆլիկտային է, անհավասարակշիռ
2. հիվանդը գանգատներ չի ներկայացնում, զրույցին դժվարամատչելի է: Վարքը անկանոն է, տարօրինակ: Իր արտաքին տեսքին չի հետևում, փնթի է, թափթփված: Խանգարված է քունը
3. անամնեզում առկա է գանգուղեղային տրավմա, գանգատվում է գլխացավից, գլխապտույտից, անքնությունից, գիտակցության կորստից: Վերջին օրերին տարել է ցնցումային նոպա

*(2)*

*Յարց* 32.(04.3467) Որ տարբերակը կարող է նախնական ախտորոշվել որպես նևրոտիկ խանգարում

1. անձը գանգատվում է տրամադրության անկումից, վախի և տագնապի զգացումից, սրտխփոցից կրծքավանդակի շրջանում, ճնշման զգացումից, գերքրտնարտադրությունից: Օբյեկտիվորեն դրսևորում է անհանգիստ, տագնապած վարք, անընդհատ դիմում է բժշկի, խնդրում է նշանակել բուժում/իրեն հիվանդ է համարում/
2. անձը դրսևորում է անհանգիստ, տագնապալի վարք: Տրամադրությունը անկումային է: Առկա են վեգետատիվ խանգարումներ: Բժշկի չի դիմում, իրեն հիվանդ չի համարում
3. անձը մեկուսացած է , տրամադրությունը ճնշված է, շարժողական ակտիվությունը նվազած է, քիչ է խոսում, գանգատվում է վախի և անհանգստության զգացումից, սրտի շրջանի ցավից, փորկապությունից, նկատվում է քաշի անկում

*(1)*

**Կրտսեր**

*Յարց* 33.(04.3468) Նշված վիճակներից որն է առավել վտանգավոր ինքնասպանություն կատարելու առումով

1. հիվանդը բազում գանգատներ է ներկայացնում/ գլխացավ, գլխապտույտ, սրտխառնոց, ցավեր և անախորժ զգացումներ մարմնի տարբեր մասերում, մարսողության խանգարումներ/,

էմոցիոնալ ռեակցիաները մակերեսային են, փոփոխական են, վարքը թեթևամիտ է: Առկա են քայլելու խանգարումներ, ցնցումային նոպաներ: Անընդհատ դիմում է բժշկի, պահանջում հետազոտություններ, բուժում: Սպառնում է ինքնասպանություն կատարել

2. հիվանդը մռայլ է, լարված , կոնֆլիկտային, անհավասարակշիռ: Մշտական կոնֆլիկտների մեջ է շրջապատի հետ: Ժամանակ առ ժամանակ դրսևորում է անկառավարելի, իմպուլսիվ, ագրեսիվ վարք

3. հիվանդը սակավախոս է, կենտրոնացած, միայնակ, լարված, ինքնամփոփ: Կտրված է ռեալ իրականությունից

*(3)*

*Հարց* 34.(04.3469) Նշվածներից որը կարող է բնութագրվել որպես հիվանդության սիմուլյացիա

1. դատապարտյալը ակտիվ է: Անընդհատ շարժման մեջ է, խոսում է, պլաններ կազմում, մի միտքը չավարտած՝ անցնում է մյուսին: Տրամադրությունը բարձր է: Իր հնարավորությունները բարձր է գնահատում: Վատ է սնվում, վատ է քնում: Գանգատներ չի ներկայացնում

2. բժշկին դիմում է գանգատներով,որ թշնամիներ ունի, որոնք ուզում են իրեն ֆիզիկապես ոչնչացնել, օրվա տարբեր ժամերի իր գործով տուժածի / հանցուցյալի/ ձայներն է լսում: Օբյեկտիվորեն վարքը հանգիստ է , կանոնավոր, շփվում է շրջապատի հետ, տրամադրությունը հարթ է: Սնվում և քնում է բավարար

3. գանգատվում է գլխացավից, անքնությունից: Զրույցի ժամանակ պարզվում է, որ երեկոյան ժամերին գլխի մեջ անծանոթ մարդկանց ձայներ է լսում, որոնք իրեն հայհոյում են: Մեկուսացած է , ընկճված, վատ է քնում

*(2)*

*Հարց* 35.(04.3470) Քրեակատարողական հիմնարկում համաճարակի օջախում կարող է անցկացվել

1. կարանտին
2. ուժեղացված բժշկական հսկողություն
3. ուժեղացված բժշկական հսկողություն, օբսերվացիա, կարանտին

*(3)*

*Հարց* 36.(04.3471) Քրեակատարողական հիմնարկում վարակակիր հիվանդների վաղ բացահայտման համար իրականացվում են

1. հարցումներ, հետազոտումներ, ջերմաչափում, լաբորատոր հետազոտություններ
2. հետազոտումներ և ջերմաչափում
3. լաբորատոր հետազոտություններ

*(1)*

*Հարց* 37.(04.3472) Քրեակատարողական հիմնարկում ուժեղացված բժշկական հսկողության ռեժիմ սահմանում է

1. քրեակատարողական հիմնարկի պետը
2. քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի պետը
3. քրեակատարողական վարչության պետը

*(2)*

*Հարց* 38.(04.3473) Քրեակատարողական հիմնարկում պատրաստի կերակրատեսակի նմուշը պետք է պահպանվի

1. 12 ժամ
2. 6 ժամ
3. 24 ժամ

*(3)*

**Առաջատար**

*Հարց* 39.(04.3474) Թոքերի այտուց զարգանում է

1. թոքային զարկերակի թրոմբոէմբոլիայի հետևանքով
2. աջ փորոքի անբավարարության հետևանքով
3. ձախ փորոքի անբավարարության հետևանքով

*(3)*

*Հարց* 40.(04.3475) Մորգան-Ադամս-Ստոքսի սինդրոմը /գլխապտույտ, գիտակցության կորուստ/ կարող է զարգանալ

1. էքստրասիստոլաներ առիթմիայի ժամանակ
2. լրիվ նախասիրտ-փորոքային բլոկադայի ժամանակ
3. շողացող առիթմիայի ժամանակ

*(2)*

*Հարց* 41.(04.3476) Սրտամկանի ինֆարկտի բարդություններն են

1. սրտի անևրիզմա
2. աորտայի անևրիզմա
3. անաֆիլակտիկ շոկ

*(1)*

*Հարց* 42.(04.3477) Երկրորդային /սիմպտոմատիկ/ արտերիալ հիպերտենզիա առաջացնում են

1. ռևմատոիդ արթրիտ

2. ռենովասկուլյար հիվանդություններ
3. ստամոքսի հետռեզեկցիոն սինդրոմ

*(2)*

*Հարց* 43.(04.3478) Ստենոկարդիայի /կրծքային հեղձուկ/ բնորոշ նշաններն են
1. սեղմող բնույթի ցավ կրծոսկրի հետևում
2. ծակող բնույթի ցավ սրտի շրջանում
3. ցավ կրծքավանդակում, որը ուժեղանում է շարժումների ժամանակ

*(1)*

*Հարց* 44.(04.3479) Որ վեներական հիվանդության ժամանակ կարող է ախտահարվել սրտի աորտալ փականը
1. գոնորեա
2. սիֆիլիս
3. խլամիդիոզ

*(2)*

*Հարց* 45.(04.3480) Սրտի ռիթմի որ խանգարման ժամանակ է օգտագործվում բուժման ֆիզիկական մեթոդը՝ ակնագնդերի սեղմումը
1. վերփորոքային պարոքսիզմալ հաճախասրտություն /տախիկարդիա/
2. նախասրտերի շողացում
3. սինուսային բրադիկարդիա /դանդաղասրտություն/

*(1)*

**Կրտսեր**

*Հարց* 46.(04.3481) Սրտի իշեմիկ հիվանդության զարգացմանը նպաստող ռիսկի ֆակտորներից որն է պահանջում դեղորայքային բուժում
1. հիպոդինամիան և քաշի ավելացումը
2. ծխելը
3. հիպերտոնիկ հիվանդությունը

*(3)*

*Հարց* 47.(04.3482) Որ ախտանիշների դեպքում կարելի է կասկածել տուբերկուլոզի մասին
1. հազ 2 շաբաթ և ավել
2. խորխարտադրություն, արյունախխում, ընդհանուր թուլություն
3. ընդհանուր թուլություն, հազ 2 շաբաթ և ավել, խորխարտադրություն, արյունախխում

*(3)*

**Առաջատար**

*Հարց* 48.(04.3483) Վարակային հսկողության բաղկացուցիչ մաս է

1. հիվանդների տեղաբաշխումը՝ ըստ բաժինների
2. հիվանդների տեղաբաշխումը՝ ըստ բաժինների, պաշտպանության անհատական միջոցներ և տեխնիկական միջոցներ
3. պաշտպանության անհատական միջոցները և տեխնիկական միջոցները

*(2)*

**Կրտսեր**

*Հարց* 49.(04.3484) Տուբերկուլոզի պասիվ հայտնաբերումը

1. դեպքերի հայտնաբերումն է՝ ըստ հիվանդի դիմելիության
2. ռենտգեն հետազոտությունն է՝ տարեկան 2 անգամ
3. երկու պատասխանն էլ ճիշտ են

*(1)*

**Առաջատար**

*Հարց* 50.(04.3485) Պրոֆիլակտիկ նպատակով հակատուբերկուլոզային դեղորայք կարող են ընդունել

1. յուրաքանչյուր մարդ՝ տուբերկուլյոզով չհիվանդանալու նպատակով
2. կոնտակտավորները, ՄԻԱՎ-վարակակիրները՝ համապատասխան ցուցումների դեպքում
3. երկու պատասխանն էլ ճիշտ են

*(2)*

**Կրտսեր**

*Հարց* 51.(04.3486) Դեկրետացված խմբի մեջ մտնում են

1. կալանավորված անձինք
2. առողջապահության, սննդի, կոմունալ-կենցաղային սպասարկման ոլորտի աշխատողներ
3. կալանավորված անձինք և դատապարտյալները

*(2)*

*Հարց* 52.(04.3487) Դեկրետացված անձինք բժշկական հետազոտման են ենթարկվում

1. 3 ամիսը մեկ անգամ
2. 6 ամիսը մեկ անգամ
3. 12 ամիսը մեկ անգամ

*(1)*

*Հարց* 53.(04.3488) Քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի ստացիոնարում հիվանդասենյակների մակերեսը յուրաքանչյուր հիվանդի համար պետք է լինի

1. 3 քառ.մ
2. 4 քառ.մ
3. 5 քառ.մ
4. 7 քառ.մ

*(3)*

*Հարց* 54.(04.3489) Քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի ստացիոնարում հիվանդասենյակների մակերեսը յուրաքանչյուր տուբերկուլոզով հիվանդի համար պետք է լինի

1. 3 քառ.մ
2. 5 քառ.մ
3. 6 քառ.մ
4. 7 քառ.մ

*(3)*

*Հարց* 55.(04.3490) Վերակարգից կամ աշխատանքից դատապարտյալին և կալանավորված անձին կարող է ազատել

1. քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահը
2. քրեակատարողական հիմնարկի բժիշկը, բուժակը
3. քրեակատարողական հիմնարկի պետը

*(2)*

*ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ*

**Գործառութային պարտականություններ**

**Կրտսեր**

*Հարց* 1.(04.2813) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության ընդհանուր աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման կարգը հաստատված է

1. ՀՀ կառավարության աշխատակազմի գործավարության կարգով
2. ՀՀ ԱՆ 2009թվականի թիվ 311-Ն հրամանով
3. Հայաստանի Հանրապետության օրենքներով

*(2)*

*Հարց* 2.(04.2819)   Ինչ է անվանակարգը

1. մուտքագրված փաստաթղթերի համակարգված թվարկում /ցուցակ/ է
2. ընթացիկ տարվա գործունեությունը կանոնակարգող կոնկրետ գործերի համակարգված թվարկում /ցուցակ/ է
3. շարունակական գործերի համակարգված թվարկում /ցուցակ/ է

*(2)*

*Հարց* 3.(04.2820)   Ինչպես է կազմվում գործերի ամփոփ անվանակարգը

1. վերադասի հանձնարարականներով
2. վեց ամիսը մեկ անգամ զեկուցագրերի հիման վրա
3. բաժինների անհատական անվանակարգերի հիման վրա

*(3)*

*Հարց* 4.(04.2821)   Տարվա գործերի անվանակարգում փաստաթղթերի պահպանման ժամկետները գրվում են

1. ՀՀ կառավարության որոշմամբ
2. ստորաբաժանումների ներկայացրած ժամկետներով
3. ՀՀ ԱՆ հրամաններով եւ հրահանգներով

*(1)*

*Հարց* 5.(04.2822)   Անվանակարգում կարելի է կատարել փոփոխություններ եւ լրացումներ, եթե

1. փոխվում է անվանակարգի պատասխանատուն
2. հիմնարկի պետը փոխվում է
3. հիմնարկի պետը հաստատում է անվանակարգի պատասխանատուի ներկայացրած գրավոր հիմնավորումը

*(3)*

*Հարց* 6.(04.2823)   Անվանակարգային գործերի հատորները գրանցվում են

1. առանձին համարներով և գույքային հաշվառման են վերցվում շարունակական համարներով
2. առանձին համարներով
3. որպես ինքնուրույն գործեր եւ գույքային հաշվառման են վերցվում առաջին հատորի համարով

*(2)*

*Հարց* 7.(04.2824) Գաղտնի թղթակցությունն իրականացվում է

1. ըստ գործավարության ժամանակացույցի
2. օրենսդրությամբ սահմանված կարգով
3. ՀՀ ազգային ժողովի որոշմամբ

*(2)*

*Հարց* 8.(04.2825) Բաժինների գործունեությունը կարգավորող մատյանները գրանցվում են

1. մատյանների հաշվառման մատյանում
2. մատյանների գույքային հաշվառման գործում
3. մատյանների հաշվառման մատյանում, որը գրանցվում է գույքային հաշվառման անվանակարգում

*(1)*

*Հարց* 9.(04.2826) Ընդհանուր աշխատանքներ իրականացնող ստորաբաժանման աշխատակիցը պարտավոր է ստացված ծրարը բացելիս ստուգել

1. փաստաթղթերի առկայությունը /ներառյալ հավելվածները/, առդիր թերթերի քանակը, փաստաթղթերի համարները համեմատել ծրարի վրա նշվածների հետ
2. փաստաթղթերի առկայությունը /ներառյալ հավելվածները/ եւ թերթերի քանակը
3. փաստաթղթերի համարները համեմատել ծրարի վրա նշվածների հետ

*(1)*

*Հարց* 10.(04.2827) Ծրարները բացելիս ընդհանուր աաշխատանքներ իրականացնող ստորաբաժանման աշխատակիցը պարտավոր է

1. յուրաքանչյուր փաստաթուղթ գրանցել համապատասխան մատյանում միեւնույն համարով
2. ստուգել փաստաթղթերի առկայությունը /ներառյալ հավելվածները/, առդիր թերթերի քանակը, փաստաթղթերի համարները համեմատել ծրարի վրա նշվածների հետ, եթե այդպիսիք կան
3. յուրաքանչյուր փաստաթուղթ գրանցել համապատասխան մատյանում ըստ ներկայացված ժամկետի

*(2)*

*Հարց* 11.(04.2828) Ընդհանուր աշխատանքների բաժնում /խմբում/ բացվում են

1. բոլոր , այդ թվում նաեւ «անձամբ» մակագրությամբ ծրարները
2. միայն գաղտնի ծրարները
3. բոլոր ծրարները, բացի «անձամբ» մակագրությամբ ծրարների

*(3)*

*Հարց* 12.(04.2829) Սխալմամբ ուղարկված փաստաթղթերը

1. գրանցվում են եւ ուղարկվում ճիշտ հասցեատիրոջ
2. չեն գրանցվում եւ վերադարձվում են առաքողին կամ նրա համաձայնությամբ ուղարկվում են ճիշտ հասցեատիրոջը
3. չեն գրանցվում եւ ոչնչացվում են

*(2)*

*Հարց* 13.(04.2830) Գրանցված եւ մակագրված փաստաթուղթ կատարողին է տրվում

1. ընդհանուր բաժնի միջոցով երկու օրվա ընթացքում
2. ստորագրությամբ՝ ըստ պատկանելության, հանձնվում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին
3. անհրաժեշտության դեպքում հինգ օրվա ընթացքում

*(2)*

*Հարց* 14.(04.2831) Մակագրված փաստաթղթերի փոխանցում կառուցվածքային մեկ ստորաբաժանումից մյուսին կատարվում է

1. ըստ ղեկավարության համաձայնության
2. ընդհանուր աշխատանքների բաժնի /խմբի/ միջոցով վարչության կամ հիմնարկի պետի համապատասխան մակագրությամբ
3. ընդհանուր աշխատանքների բաժնի /խմբի/ միջոցով առանց սահմանափակումների

*(2)*

*Հարց* 15.(04.2832) Ընդհանուր աշխատանքների բաժնում /խմբում/ կազմվում է ժամկետանց փաստաթղթերի, մատյանների

1. ոչնչացման գործը
2. ոչնչացման ցուցակները
3. իրականացվում է ոչնչացումը

*(2)*

*Հարց* 16.(04.2833) Կատարման հսկողության ենթակա են

1. «շտապ» մակագրության փաստաթղթերը
2. միայն ելքի փաստաթղթերը
3. մուտքի, ելքի եւ ներքին շրջանառության փաստաթղթերը

*(3)*

*Հարց* 17.(04.2834) Հսկողությունը փաստաթղթերի կատարման նկատմամբ իրականացվում է համապատասխան մակագրված փաստաթուղթը ստանալուց

1. և հսկողության ժամկետը լրանալուց մեկ օր առաջ
2. անմիջապես հետո
3. համապատասխան ստուգումներ իրականացնելուց հետո

*(2)*

*Հարց* 18.(04.2835) Եթե փաստաթղթի կատարման համար հանձնարարական է տրվում միաժամանակ մի քանի կատարողների, ապա դրա կատարման համար պատասխանատու է համարվում

1. հասցեատերերից յուրաքանչյուրն իր մասով
2. առաջին հասցեատերը
3. ընդհանուր աշխատանքների բաժինը

*(2)*

*Հարց* 19.(04.2837) Ընդհանուր աշխատանքների բաժնի /խմբի/ աշխատողը պատասխանատու է

1. փաստաթղթի կատարումն ապահովելու համար
2. փաստաթղթի բովանդակությանը լիիրավ տիրապետելու համար
3. իր մոտ եղած փաստաթղթերի պահպանության եւ խնամքով վերաբերվելու համար

*(3)*

*Հարց* 20.(04.2838) Արձակուրդ գնալիս, երկարատեւ գործուղման մեկնելիս կամ այլ պատճառներով բացակայելիս ընդհանուր աշխատանքների բաժնի /խմբի/ աշխատողը պարտավոր է

1. փաստաթղթերը պահել մինչ վերադարձը
2. տեղյակ պահել ղեկավարությանը
3. իր մոտ եղած անավարտ փաստաթղթերը հանձնել իրեն փոխարինողին

*(3)*

*Հարց* 21.(04.2839) Քաղաքացին, իրավաբանական անձը, ով համաձայն չէ իր առաջարկության, դիմումի, բողոքի առթիվ ընդունված որոշմանը, իրավունք ունի այն բողոքարկել

1. այն մարմնին կամ պաշտոնատար անձին, որին անմիջականորեն ենթակա են բողոքարկվող որոշում ընդունած պետական մարմինը, տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը
2. կառավարություն

3. ազգային ժողով

*(1)*

*Հարց* 22.(04.2840) Ինչպես է իրականացվում գաղտնի թղթակցությունն ընդհանուր աշխատանքների բաժնում /խմբում/

1. ՀՀ Նախագահի եւ Ազգային ժողովի կողմից լիազորություններով օժտված պաշտոնատար անձանց կողմից ընդունված իրավական ակտերով
2. Օրենսդրությամբ սահմանված կարգով
3. ՀՀ Նախագահի, Սահմանադրական դատարանի իրավական ակտերով

*(2)*

*Հարց* 23.(04.2842) Կալանավորված անձի կամ դատապարտյալի անձնական հաշվին ֆինանսական միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում փոստային հաղորդումն իրականացնելու մասին դիմումը

1. ուղարկվում է միայն հարազատներին
2. մերժվում կամ իրականացվում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի հաշվին՝ քրեակատարողական հիմնարկի պետի թույլտվությամբ
3. ուղարկվում է միայն ԱԺ

*(2)*

*Հարց* 24.(04.2843) Փաստաթղթերի ելից հերթական համարը դրվում է

1. տեքստի ներքեւի աջ անկյունում
2. տեքստի վերեւի աջ անկյունում
3. տեքստի վերեւի ձախ անկյունում, որի սկզբնամասում գրվում է Ե տառը

*(3)*

*Հարց* 25.(04.2844) Ելքի փաստաթուղթը գրանցվում եւ առաքվում է

1. պայմանանիշից եւ հերթական համարից բաղկացած ելքի համարը դնելուց հետո
2. ղեկավարի, իսկ նրա բացակայության դեպքում համապատասխան տեղակալի կողմից ստորագրելուց, պայմանանիշից եւ հերթական համարից ելքի համարը դնելուց հետո
3. ղեկավարի, իսկ նրա բացակայության դեպքում համապատասխան տեղակալի կողմից ստորագրելուց հետո

*(2)*

*Հարց* 26.(04.2845) Առաքման համար փաստաթղթերն ընդունելիս աշխատողը ստուգում է

1. առաքվող փաստաթղթերի օրինակները եւ թերթերի առկայությունը, ղեկավարի ստորագրությունը

2. եւ վերադարձնում է ավելորդ օրինակները
3. փաստաթղթերի գրագետ լրացման կարգը

*(1)*

*Հարց* 27.(04.2846) Բողոքները, դիմումները տրվում են
1. այն մարմիններին կամ պաշտոնատար անձանց, որոնց անմիջականորեն ենթակա է այն մարմինը կամ պաշտոնատար անձը, որոնց գործողությունները բողոքարկվում են
2. այն պաշտոնատար անձանց, որոնց գործողությունները բողոքարկվում են
3. այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց տնօրինությանը չի վերապահվում բողոքներում առաջարկված հարցերը

*(1)*

*Հարց* 28.(04.2847) Դիմումների, բողոքների պատասխանները ուղարկվում են հասցեատերերին
1. հանձնման պահից հաշված 13 աշխատանքային օրվա ընթացքում
2. հանձնման պահից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում
3. հանձնման պահից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի

*(3)*

*Հարց* 29.(04.2848) Ընդհանուր աշխատանքների խումբը դատապարտյալների եւ կալանավորված անձանց դիմումներն ուղարկում է հասցեատերերին
1. ամիսը 3 անգամ
2. առանց սահմանափակման
3. ամիսը 7 անգամ

*(2)*

*Հարց* 30.(04.2849) Քաղաքացու, իրավաբանական անձի դիմումը, բողոքը եւ առաջարկությունը անստորագիր չի համարվում, եթե
1. նշված է դիմումատուի ազգանունը, անունը, հայրանունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության հասցեն եւ ստորագրված է
2. նշված է դիմումատուի ազգանունը, անունը, հայրանունը
3. նշված է դիմումատուի ազգանունը, անունը, հայրանունը, բնակության վայրը

*(1)*

*Հարց* 31.(04.2852) Դիմումների կատարման ժամկետը կարող է երկարաձգվել
1. մինչեւ երկու ամիս եւ պահանջել լրացուցիչ նյութեր

2. ոչ ավելի, քան 15 օրով, այդ մասին հայտնելով դիմում կամ բողոք բերած անձին
3. եթե ընթացք տալու համար անհրաժեշտ է վերադասի թույլտվությունը

*(2)*

*Հարց* 32.(04.2854) Քաղաքացիների եւ իրավաբանական անձանց դիմումներն ու բողոքները վերցվում են հատուկ հսկողության եւ դրանց կատարման համար
1. պատասխանվում է անմիջապես
2. սահմանվում են անհատական ժամկետներ
3. ժամկետ չի սահմանվում

*(2)*

*Հարց* 33.(04.2855) Զրպարտչական նպատակներով, ինչպես նաեւ անձի պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկություններ բովանդակող՝ քաղաքացու դիմում տալը առաջացնում է պատասխանատվություն
1. ՀՀ կառավարության որոշումներով
2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով
3. ՀՀ արդարադատության նախարարի հատուկ հանձնարարականներով

*(2)*

*Հարց* 34.(04.2861) Ընդհանուր աշխատանքների բաժնի /խումբի/ խնդիրներից է
1. Ապահովել թղթակցության շարժը
2. Իրականացնել փաստաթղթերի առաքումը
3. Սահմանված կարգով և ժամկետներում ապահովել թղթակցության ընդունումը, գրանցումը և շարժը

*(3)*

*Հարց* 35.(04.2862) Վարույթով ավարտված անվանակարգային գործերի եւ մատյանների ժամկետները սահմանվում են ըստ
1. ՀՀ կառավարության որոշման
2. ստորաբաժանումների կողմից ներկայացված եւ հիմնավորված ժամկետների
3. կենտրոնական մարմնի կանոնադրության

*(1)*

*Հարց* 36.(04.2865) Ոչնչացման են ենթակա այն գործերը, մատյանները, որոնց
1. գործունեությունը դադարեցված է, սակայն ունեն գիտական արժեք
2. գրանցվել եւ հաշվառվել են նախորդ տարիների ընթացքում
3. պահպանման ժամկետները անցած են եւ կորցրել են գործնական նշանակությունը

*(3)*

## Կադրերի և անձնակազմի հետ տարվող աշխատանքներ

### Գործառութային պարտականություններ

*Յարց* 1.(04.2142) Կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների համար սահմանային տարիք է համարվում

1. 45 տարեկանը
2. 50 տարեկանը
3. 55 տարեկանը
4. 60 տարեկանը

*(2)*

*Յարց* 2.(04.2143) Առաջատար եւ միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների համար սահմանային տարիք է համարվում

1. 50 տարեկանը
2. 60 տարեկանը
3. 55 տարեկանը
4. 45 տարեկանը

*(3)*

*Յարց* 3.(04.2144) Գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների համար սահմանային տարիք է համարվում

1. 60 տարեկանը
2. 50 տարեկանը
3. 55 տարեկանը
4. 65 տարեկանը

*(1)*

*Յարց* 4.(04.2146) Քրեակատարողական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետեւյալ տեսակները

1. կրծքանշանով պարգեւատրում
2. զինանշանով պարգեւատրում
3. լրացուցիչ արձակուրդի տրամադրում

*(1)*

*Հարց* 5.(04.2147) Քրեակատարողական ծառայողի նկատմամբ կիրառվում են կարգապահական հետեւյալ տույժերը

1. նկատողություն, խիստ նկատողություն, պաշտոնի իջեցում կամ այլ պաշտոնի փոխանակում, կոչման իջեցում՝մեկ աստիճանով, ծառայությունից հեռացում
2. նկատողություն, խիստ նկատողություն, պաշտոնի իջեցում, կոչման իջեցում՝ մեկ աստիճանով, ծառայությունից ազատում
3. նկատողություն, խիստ նկատողություն, պաշտոնի իջեցում կամ այլ պաշտոնի փոխադրում, կոչման իջեցում՝երկու աստիճանով, ծառայությունից հեռացում

*(2)*

*Հարց* 6.(04.2148) Կարգապահական տույժը նշանակվում է

1. եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝չհաշված քրեակատարողական ծառայողի հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը
2. եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից
3. եթե չորս ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝չհաշված քրեակատարողական ծառայողի հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը

*(1)*

*Հարց* 7.(04.2149) Կարգապահական տույժը համարվում է մարված

1. եթե կարգապահական տույժ նշանակելու օրվանից ինն ամսվա ընթացքում քրեակատարողական ծառայողը նոր կարգապահական խախտում չի թույլ տվել
2. եթե կարգապահական տույժ նշանակելու օրվանից մեկ տարվա ընթացքում քրեակատարողական ծառայողը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել
3. եթե կարգապահական տույժ նշանակելու օրվանից վեց ամսվա ընթացքում քրեակատարողական ծառայողը նոր կարգապահական խախտում չի թույլ տվել

*(2)*

*Հարց* 8.(04.2150) Կարգապահական տույժը կարող է հանվել

1. կարգապահական տույժ նշանակելու օրվանից վեց ամիս հետո մինչև մեկ տարին լրանալը
2. կարգապահական տույժ նշանակելու օրվանից երեք ամիս հետո մինչև մեկ տարին լրանալը, եթե քրեակատարողական ծառայողը թույլ չի տվել նոր կարգապահական խախտում

3. կարգապահական տույժ նշանակելու օրվանից վեց ամիս հետո մինչև մեկ տարին լրանալը, եթե քրեակատարողական ծառայողը թույլ չի տվել նոր կարգապահական խախտում

*(3)*

*Հարց* 9.(04.2151) Քրեակատարողական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետեւյալ տեսակները

1. շնորհակալության հայտարարում, միանվագ դրամական պարգեւատրում, հուշանվերով պարգեւատրում, անհատական զենքով պարգեւատրում, արտահերթ կոչման շնորհում, կրծքանշանով պարգեւատրում
2. շնորհակալության հայտարարում, միանվագ դրամական պարգեւատրում, արտահերթ կոչման շնորհում, անհատական զենքով պարգեւատրում
3. շնորհակալության հայտարարում, միանվագ դրամական պարգեւատրում, հուշանվերով պարգեւատրում, արտահերթ կոչման շնորհում, տվյալ պաշտոնի համար սահմանված առավելագույն կոչումից մեկ աստիճան բարձր կոչումի շնորհում, կրծքանշանով պարգեւատրում

*(3)*

*Հարց* 10.(04.2152) Քրեակատարողական ծառայողը, ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված, առանց իր համաձայնության կարող է փոխադրվել

1. զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ պաշտոնի՝ տվյալ պաշտոնում առնվազն վեց ամիս ծառայելուց հետո
2. զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ պաշտոնի՝ տվյալ պաշտոնում առնվազն երեք ամիս ծառայելուց հետո
3. զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ պաշտոնի՝ տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո, բացառությամբ օրենքով նախատեսված պարտադիր ռոտացիայի դեպքում

*(3)*

*Հարց* 11.(04.2153) Քրեակատարողական ծառայողը, ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված, կարող է փոխադրվել

1. իր զբաղեցրած պաշտոնից մեկ աստիճանով ցածր պաշտոնի, եթե ատեստավորումից հետո կայացվել է որոշում՝ զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին
2. տվյալ պաշտոնում առնվազն վեց ամիս ծառայելուց հետո
3. տվյալ պաշտոնում առնվազն չորս ամիս ծառայելուց հետո

*(1)*

*Հարց* 12.(04.2154) Քրեակատարողական ծառայողը կարող է փոխադրվել իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանող խմբում ավելի ցածր պաշտոնի առանց իր համաձայնության

1. եթե փոխադրումը կապված է կառուցվածքային փոփոխությունների կամ հաստիքների կրճատման հետ
2. եթե փոխադրումը կատարվում է հիմնարկի պետի միջնորդությամբ
3. եթե փոխադրումը կապված է նոր հաստիքների հայտարարման հետ

*(1)*

*Հարց* 13.(04.2156) Քրեակատարողական ծառայության առաջատար խմբի պաշտոններում կարող է նշանակվել

1. այն ծառայողը, ով զբաղեցրել է քրեակատարողական ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար խմբի կամ առնվազն մեկ տարի միջին խմբի պաշտոն, բացառությամբ բժշկական սպասարկման ոլորտի պաշտոնների
2. ատեստավորման արդյունքում՝ թափուր պաշտոնի համար նախատեսված առավելագույն կոչումից մեկ աստիճանով ոչ ցածր կոչումով առնվազն վեց ամիս ծառայելուց հետո
3. հիմնարկի պետի միջնորդագրի հիման վրա եւ թափուր պաշտոնի համար նախատեսված առավելագույն կոչումից երկու աստիճանով ոչ ցածր կոչումով առնվազն երկու տարի ծառայելուց հետո

*(1)*

*Հարց* 14.(04.2157) Քրեակատարողական ծառայությունում պաշտոնի անցնելու համար սահմանված պահանջները բավարարող, սակայն աշխատանքային փորձ չունեցող քաղաքացիները

1. պաշտոնի չեն նշանակվում
2. ներգրավվում են երկամսյա ուսումնական դասընթացների՝ նրանց պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից
3. կարող են ներգրավվել մեկամսյա ուսումնական դասընթացների՝ նրանց պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից

*(3)*

*Հարց* 15.(04.2158) Կոչումով ծառայության ժամկետը հաշվարկվում է

1. այդ կոչման շնորհման մասին հրամանի ստորագրման հաջորդ օրվանից
2. այդ կոչման շնորհման մասին հրամանի ստորագրման օրվան հաջորդող ամսվա մեկից
3. այդ կոչման շնորհման մասին հրամանի ստորագրման օրվանից

*(1)*

*Հարց* 16.(04.2160) Աշխատավարձի հաշվարկման ժամանակ քրեակատարողական ծառայողի պաշտոնային դրույքաչափերի համակարգում անցումը հերթական մակարդակին կատարվում է աղյուսակով նախատեսված քրեակատարողական ծառայողի աշխատանքային ստաժին համապատասխան

1. տարին լրանալու օրվան հաջորդող ամսվա մեկից
2. տարին լրանալու օրվան հաջորդող օրվանից
3. համապատասխան եզրակացության հիման վրա հրամանի ստորագրման օրվանից

*(1)*

*Հարց* 17.(04.2161) Քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի պաշտոնների համար առավելագույն կոչում է սահմանվում

1. արդարադատության մայոր «ա» ենթախմբի եւ արդարադատության փոխգնդապետ՝ «բ» ենթախմբի համար
2. արդարադատության գնդապետ «ա» ենթախմբի եւ արդարադատության փոխգնդապետ՝ «բ» ենթախմբի համար
3. արդարադատության փոխգնդապետ «ա» ենթախմբի եւ արդարադատության գնդապետ՝ «բ» ենթախմբի համար

*(2)*

*Հարց* 18.(04.2162) Քրեակատարողական ծառայության առաջատար խմբի պաշտոնների համար առավելագույն կոչում է սահմանվում

1. արդարադատության փոխգնդապետ«ա» ենթախմբի եւ արդարադատության մայոր՝ «բ» ենթախմբի համար
2. արդարադատության գնդապետ«ա» ենթախմբի եւ արդարադատության փոխգնդապետ՝ «բ» ենթախմբի համար
3. արդարադատության մայոր բոլոր ենթախմբերի համար

*(1)*

*Հարց* 19.(04.2163) Քրեակատարողական ծառայության կրտսեր խմբի պաշտոնների համար առավելագույն կոչում է սահմանվում

1. արդարադատության լեյտենանտ «ա» ենթախմբի և արդարադատության ավագ ենթասպա «բ» ենթախմբի համար
2. արդարադատության ավագ ենթասպա «ա» ենթախմբի եւ արդարադատության ենթասպա՝ «բ» ենթախմբի համար
3. արդարադատության ավագ ենթասպա բոլոր ենթախմբերի համար

*(2)*

*Հարց* 20.(04.2164) Քրեակատարողական հիմնարկի կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների կոչումները շնորհում է

1. քրեակատարողական հիմնարկի պետը
2. քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի պետը
3. ՀՀ արդարադատության նախարարը

*(1)*

*Հարց* 21.(04.2165) Գլխավոր, առաջատար եւ միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների կոչումները շնորհում է

1. քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի պետը
2. ՀՀ արդարադատության նախարարը
3. քրեակատարողական հիմնարկի պետը

*(1)*

*Հարց* 22.(04.2877) Քրեակատարողական ծառայողի մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելու նպատակով անցկացվում է

1. ատեստավորում
2. հատուկ ուսուցում
3. վերապատրաստում

*(1)*

*Հարց* 23.(04.2878) Ատեստավորման անցկացման ժամանակը հայտարարվում է

1. քրեակատարողական հիմնարկի պետի հրամանով
2. արդարադատության նախարարի հրամանով
3. քրեակատարողական վարչության պետի հրամանով

*(3)*

*Հարց* 24.(04.2879) Ատեստավորման ենթակա քրեակատարողական ծառայողներին այդ մասին տեղյակ են պահում

1. ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան տասը օր առաջ
2. ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան երկու ամիս առաջ
3. ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ

*(3)*

*Հարց* 25.(04.2880) Ատեստավորման հանձնաժողովը կամ հանձնաժողովները ստեղծվում են

1. ՀՀ արդարադատության նախարարի կողմից

2. քրեակատարողական հիմնարկի պետի կողմից
3. քրեակատարողական վարչության պետի կողմից

*(1)*

*Հարց* 26.(04.2881) Քրեակատարողական ծառայողն ատեստավորման ներկայանում է
1. համազգեստով
2. վկայականով
3. վկայականով եւ համազգեստով

*(3)*

*Հարց* 27.(04.2882) Ատեստավորումն անցկացվում է
1. փաստաթղթային եղանակով
2. միայն թեստավորման եղանակով
3. փաստաթղթային եւ հարցազրույցի եղանակով

*(3)*

*Հարց* 28.(04.2883) Ատեստավորումն անցկացվում է
1. թեստավորման եւ հարցազրույցի եղանակով
2. միայն թեստավորման եղանակով
3. փաստաթղթային եւ թեստավորման եղանակով

*(1)*

*Հարց* 29.(04.2884) Փաստաթղթային եւ հարցազրույցի եղանակով ատեստավորման ենթակա են
1. գլխավոր խմբում պաշտոն զբաղեցնողները
2. գլխավոր խմբում վերջին 5 տարում պաշտոն զբաղեցնողները
3. գլխավոր եւ առաջատար խմբերում վերջին 5 տարում պաշտոն զբաղեցնողները

*(2)*

*Հարց* 30.(04.2885) Թեստավորման եւ հարցազրույցի եղանակով ատեստավորման ենթակա են
1. այն քրեակատարողական ծառայողները, ովքեր փաստաթղթային եւ հարցազրույցի եղանակով ատեստավորման ենթակա չեն
2. բարձրագույն եւ գլխավոր խմբի քրեակատարողական ծառայողները
3. բոլոր քրեակատարողական ծառայողները, բացառությամբ կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողները

*(1)*

*Հարց* 31.(04.2886) Ատեստավորման ընթացքում հարցազրույցի փուլն անցկացվում է
1. ատեստավորման թերթիկի հիման վրա
2. ատեստավորման թերթիկի եւ ծառայողական բնութագրի հիման վրա
3. ծառայողական բնութագրի եւ ծառայողի կողմից ներկայացված տարեկան հաշվետվության հիման վրա

*(2)*

*Հարց* 32.(04.2887) Քրեակատարողական ծառայողի վերապատրաստումը
1. նրա մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով շարունակական ուսուցումն է
2. նրա մասնագիտական գիտելիքների ստուգումն է
3. նրա մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների ստուգումն է

*(1)*

*Հարց* 33.(04.2888) Քրեակատարողական ծառայողի հատուկ ուսուցումը
1. հրազենի եւ հատուկ միջոցներ կրելու, պահելու եւ գործադրելու հետ կապված գիտելիքների, ունակությունների եւ հմտությունների ստուգումն է
2. հրազենի եւ հատուկ միջոցներ կրելու, պահելու եւ գործադրելու հետ կապված գիտելիքների, ունակությունների եւ հմտությունների ուսուցանում է
3. նրա մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով շարունակական ուսուցումն է

*(2)*

*Հարց* 34.(04.2889) Վերապատրաստումը եւ հատուկ ուսուցումն անցկացվում է
1. միայն գործնական պարապմունքների ձեւով
2. դասախոսությունների եւ գործնական պարապմունքների ձեւով
3. դասախոսությունների ձեւով

*(2)*

*Հարց* 35.(04.2890) Վերապատրաստման կամ հատուկ ուսուցման ժամանակ քրեակատարողական ծառայողի լիազորությունները
1. համատեղվում են ծառայության հետ
2. չեն դադարեցվում
3. ժամանակավորապես դադարեցվում են

*(3)*

*Հարց* 36.(04.2952) Քրեակատարողական ծառայության կառուցվածքը եւ հաստիքացուցակը հաստատում է

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարը
2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը
3. Հայաստանի Հանրապետության վարչապետը

*(2)*

*Հարց* 37.(04.2953) Քրեակատարողական ծառայության պաշտոնների առաջատար եւ միջին խմբերում քրեակատարողական ծառայողներին այլ պաշտոնի փոխադրում է

1. քրեակատարողական վարչության պետը
2. քրեակատարողական ծառայության տարածքային մարմնի ղեկավարը
3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը

*(1)*

*Հարց* 38.(04.2954) Քրեակատարողական ծառայությունում պարտադիր վերապատրաստման ենթակա են

1. առաջատար եւ կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողները
2. գլխավոր, առաջատար, միջին եւ կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողները
3. բարձրագույն եւ գլխավոր խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողները

*(2)*

*Հարց* 39.(04.2955) Քրեակատարողական ծառայողներին քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի կրտսեր խմբի պաշտոններում նշանակում եւ պաշտոնից ազատում է

1. քրեակատարողական վարչության պետը
2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը
3. քրեակատարողական հիմնարկի պետը

*(1)*

*Հարց* 40.(04.2956) Քրեակատարողական ծառայողներին քրեակատարողական ծառայության առաջատար եւ միջին խմբերի պաշտոններում նշանակում եւ պաշտոնից ազատում է

1. քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ղեկավարը
2. Հայաստանի Հանրապետության վարչապետը
3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը

*(1)*

*Հարց* 41.(04.2957) Քրեակատարողական ծառայողը երդում տալիս է

1. ամեն տարի, անհատական կարգով, երդման տեքստն ընթերցելու միջոցով
2. մեկ անգամ, անհատական կարգով, երդման տեքստն ընթերցելու միջոցով
3. մեկ անգամ, խմբակային, երդման տեքստն ընթերցելու միջոցով

*(2)*

*Հարց* 42.(04.2958) Քրեակատարողական ծառայությունում կոչումները շնորհվում են

1. խմբակային, ցմահ
2. անհատական կարգով, մինչեւ ծառայության ավարտը
3. անհատական կարգով, ցմահ

*(3)*

## Կազմ-վերլուծական և միջազգային համագործակցություն

### Գործառութային պարտականություններ

*Հարց* 1.(04.2382) Ստորեւ նշվածներից որն է գերատեսչական ակտ

1. համայնքի ղեկավարի որոշումը
2. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումը
3. ՀՀ վարչապետի որոշումը

*(2)*

*Հարց* 2.(04.2383) ՀՀ նախագահի հրամանագրերը եւ կարգադրությունները

1. օրենսդրական ակտեր են
2. գերատեսչական ակտեր են
3. պետական այլ մարմինների իրավական ակտեր են

*(1)*

*Հարց* 3.(04.2384) ՀՀ ազգային ժողովի ընդունած եւ հանրաքվեով ընդունված օրենքների միջեւ հակասության դեպքում գործում են

1. ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը
2. հանրաքվեով ընդունված օրենքի նորմերը
3. ազգային ժողովի ընդունած օրենքի նորմերը

*(2)*

*Հարց* 4.(04.2385) ՀՀ օրենքները ստորագրում եւ հրապարակում է

1. ՀՀ վարչապետը
2. ՀՀ նախագահը
3. ՀՀ ազգային ժողովի նախագահը

*(2)*

*Հարց* 5.(04.2386) Իրավական ակտի պաշտոնական թարգմանությունը իրականացնում է իրավական ակտն ընդունող մարմինը կամ

1. ՀՀ կառավարությունը
2. ՀՀ ազգային ժողովը
3. ՀՀ արդարադատության նախարարությունը

*(3)*

*Հարց* 6.(04.2387) ՀՀ ԱՆ պետական գրանցման ներկայացված իրավական ակտերի օրինակները համարվում են

1. պաշտոնական օրինակ
2. կրկնօրինակ
3. ոչ պաշտոնական օրինակ

*(1)*

*Հարց* 7.(04.2394) Քրեական պատասխանատվության հիմքերն են

1. արարքը՝ հանցակազմի հատկանիշներից երկուսի բացակայությամբ
2. արարքը՝ հանցակազմի հատկանիշներից մեկի բացակայությամբ
3. արարքը ՝ հանցակազմի բոլոր հատկանիշներով

*(3)*

*Հարց* 8.(04.2396) Իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կատարում է

1. ՀՀ Սահմանադրական դատարանը
2. իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը
3. ՀՀ արդարադատության նախարարությունը

*(2)*

*Հարց* 9.(04.2397) ՀՀ օրենքները

1. ենթակա են պարտադիր պաշտոնական հրապարակման
2. ենթակա չեն պարտադիր պաշտոնական հրապարակման
3. ենթակա են պարտադիր պաշտոնական մեկնաբանման

*(1)*

*Հարց* 10.(04.2398) ՀՀ օրենքների եւ միջազգային պայմանագրերի նորմերի միջեւ հակասություններ առաջանալիս

1. միջազգային պայմանագրերի նորմերը համապատասխանեցվում են ՀՀ օրենքների նորմերին
2. կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը
3. կիրառվում են ՀՀ օրենքներով սահմանված նորմերը

*(2)*

*Հարց* 11.(04.2399) Հավասար իրավական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերը

1. կարող են լինել անվերնագիր
2. չեն կարող ունենալ միեւնույն վերնագիրը
3. կարող են ունենալ միեւնույն վերնագիրը

*(2)*

*Հարց* 12.(04.2400) Քրեակատարողական ծառայողի կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել

1. երկու կարգապահական տույժ
2. մեկից ավելի կարգապահական տույժ
3. մեկ կարգապահական տույժ

*(3)*

*Հարց* 13.(04.2401) Քրեակատարողական ծառայողի կողմից անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված կարգով
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով
3. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով սահմանված կարգով

*(2)*

*Հարց* 14.(04.2402) Պատիժներ կատարող մարմնի եւ հիմնարկի վարչակազմը պատիժը կատարելու մասին հայտնում է

1. դատարան
2. դատախազություն
3. արդարադատության նախարարություն

*(1)*

*Հարց* 15.(04.2404) Պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը որոշում է

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովը
2. դատարանը
3. քրեակատարողական հիմնարկը

*(1)*

*Հարց* 16.(04.2405) ՀՀ կառավարություն իրավական ակտերի նախագծերը ներկայացնելիս փաթեթում ներառվում է

1. նախագծի ընդունման հիմնավորումը
2. միայն փաստաթղթերի էլեկտրոնային պատճենը
3. նախագծի ընդունման հիմնավորումը, տեղեկանքները, նախագիծը մշակողի փորձագիտական եզրակացությունը, ամփոփաթերթը

*(3)*

*Հարց* 17.(04.2406) Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի խնդիրներն են

1. սահմանել քրեական պատիժներ կատարելու և պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառելու և կրելու կարգն ու պայմանները
2. ապահովել դատապարտյալի ուղղման համար անհրաժեշտ պայմանները, պաշտպանել դատապարտյալի իրավունքները և ազատությունները
3. սահմանել քրեական պատիժներ կատարելու և պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառելու և կրելու կարգն ու պայմանները, ապահովել դատապարտյալի ուղղման համար անհրաժեշտ պայմանները, պաշտպանել դատապարտյալի իրավունքները և ազատությունները

*(3)*

*Հարց* 18.(04.2407) Դատարանի դատավճռով բռնագրավման ոչ ենթակա գույքի ցանկը հաստատվում է

1. ՀՀ արդարադատության նախարարի հրամանով
2. ՀՀ կառավարության որոշմամբ
3. ՀՀ քրեակատարողական օրենսգրքով

*(3)*

*Հարց* 19.(04.2408) Մարդու իրավունքների պաշտպանն իրավունք ունի

1. միջոցառումներ անցկացնել պատիժը կատարելու վայրերում
2. պատիժ կատարելու վայրեր անարգել մուտքի եւ ելքի

3. սահմանել պատիժը կատարելու վայրերի կանոնակարգեր

*(2)*

*Հարց* 20.(04.2933) Իրավական ակտի վերնագիրը գրվում է

1. մեծատառերով
2. մեծատառերով եւ փոքրատառերով
3. փոքրատառերով

*(1)*

*Հարց* 21.(04.2934) Օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են

1. օրենսգրքի վերնագիրը
2. «Հայաստանի Հանրապետության» բառերը, օրենսգրքի վերնագիրը
3. «Հայաստանի Հանրապետության օրենսգիրք» բառերը, օրենսգրքի վերնագիրը

*(2)*

*Հարց* 22.(04.2935) Օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս դրանում հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են

1. «Հայաստանի Հանրապետության» բառերը, օրենսգրքի վերնագիրը, թիվը եւ «օրենսգիրք» բառը, ամսաթիվը
2. «Հայաստանի Հանրապետության» բառերը, օրենսգրքի վերնագիրը, թիվը եւ «օրենսգիրք» բառը
3. «Հայաստանի Հանրապետության» բառերը, նրա ընդունման օրը եւ օրենսգրքի վերնագիրը

*(3)*

*Հարց* 23.(04.2936) Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են

1. օրենքի վերնագիրը, «Հայաստանի Հանրապետության օրենք» բառերը
2. օրենքի վերնագիրը
3. «Հայաստանի Հանրապետության օրենք» բառերը, օրենքի վերնագիրը

*(1)*

*Հարց* 24.(04.2937) Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են

1. «Հայաստանի Հանրապետության» բառերը, օրենքի վերնագիրը, թիվը եւ «օրենք» բառը, ամսաթիվը

2. օրենքի վերնագիրը, «Հայաստանի Հանրապետության» բառերը, օրենքի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, թիվը եւ «օրենք» բառը

3. «Հայաստանի Հանրապետության» բառերը, օրենքի վերնագիրը, թիվը եւ «օրենք» բառը

*(2)*

*Հարց* 25.(04.2938) Նորմատիվ իրավական ակտի եզրափակիչ մասում կարող է սահմանվել

1. իրավական ակտն ընդունելու կապակցությամբ գործողությունը դադարեցնելու ենթակա իրավական ակտերի ցանկը

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում

3. նորմատիվ իրավական ակտը մշակող խմբի անվանումը

*(1)*

*Հարց* 26.(04.2939) Նորմատիվ իրավական ակտի եզրափակիչ մասում կարող է սահմանվել

1. նորմատիվ իրավական ակտը մշակող խմբի անվանումը

2. իրավական ակտն ընդունելու կապակցությամբ այլ իրավական ակտերում կատարվող փոփոխությունները կամ լրացումները

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում

*(2)*

*Հարց* 27.(04.2940) Նորմատիվ իրավական ակտի եզրափակիչ մասում կարող է սահմանվել

1. նորմատիվ իրավական ակտը մշակող խմբի անվանումը

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում

3. իրավական ակտն ուժի մեջ մտնելու եւ գործողության ժամկետները

*(3)*

*Հարց* 28.(04.2941) Գերատեսչական նորմատիվ իրավական ակտի նախաբանում նշվում է

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում

2. ում հրամանով է կատարվում

3. նորմատիվ իրավական ակտը մշակող խմբի անվանումը

*(1)*

*Հարց* 29.(04.2942) Իրավական ակտը կարող է պարունակել

1. նախաբան, հիմնական մաս, վերջաբան

2. հիմնական մաս, եզրափակիչ մաս
3. անվանում, հիմնական մաս, եզրափակիչ մաս կամ անցումային դրույթներ

*(3)*

*Հարց* 30.(04.2943) Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված է քրեակատարողական օրենսդրությամբ, ապա

1. կիրառվում են ավելի վաղ ընդունված նորմերը
2. կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը
3. կիրառվում են օրենսդրության նորմերը

*(2)*

*Հարց* 31.(04.3334) Որպես պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչ՝ վարչական դատարանում ի պաշտոնե հանդես է գալիս

1. այդ մարմնի ղեկավարի խորհրդականը կամ օգնականը
2. այդ մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը
3. այդ մարմնի ղեկավարի կողմից լիազորված ներկայացուցիչը

*(2)*

*Հարց* 32.(04.3335) Պետական մարմնի անունից լիազորագիրը տրվում է

1. համապատասխան մարմնի՝ ի պաշտոնե ներկայացուցչի կնիքով և ստորագրությամբ
2. համապատասխան մարմնի՝ ի պաշտոնե ներկայացուցչի ստորագրությամբ և մարմնի կնիքով
3. համապատասխան մարմնի՝ ի պաշտոնե ներկայացուցչի ստորագրությամբ և իր կամ մարմնի կնիքով

*(2)*

*Հարց* 33.(04.3336) Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե

1. անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը
2. վարչական ակտի հասցեատերը բացակայում է
3. դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ

*(3)*

*Հարց* 34.(04.3337) Դիմումով հարուցված վարչական վարույթը կասեցվում է, եթե

1. անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը

2. դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ

3. դիմումը ներկայացվել է առանց ստորագրության, և վարչական մարմինը, միջոցներ ձեռնարկելով դիմողին բացահայտելու ուղղությամբ, չի կարողացել պարզել, թե ով է հայցում համապատասխան վարչական ակտի ընդունումը

*(1)*

*Հարց* 35.(04.3338) Վարչական մարմնի պաշտոնատար անձը

1. իրավունք ունի քննարկելու և լուծելու գործը, եթե նա նախկինում մասնակցել է տվյալ գործի քննարկմանը

2. իրավունք չունի քննարկելու և լուծելու գործը, եթե նա նախկինում մասնակցել է տվյալ գործի քննարկմանը

3. իրավունք ունի քննարկելու և լուծելու գործը, եթե նա աշխատում է վարույթի մասնակիցներից որևէ մեկի մոտ

*(2)*

## ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

**Գործառութային պարտականություններ**

**Կրտսեր**

*Հարց* 1.(04.2204) Կալանավորված անձին քրեակատարողական հիմնարկ ընդունելու համար հիմք է հանդիսանում

1. ձերբակալման արձանագրությունը
2. դատախազության կամ ոստիկանության գրությունը
3. խափանման միջոց կալանք ընտրելու վերաբերյալ դատարանի որոշումը

*(3)*

*Հարց* 2.(04.2205) Կալանավորված անձանց եւ դատապարտյալների վերաբերյալ կալանավորված անձանց եւ դատապարտյալների հաշվառման բաժնում տարվում է հետեւյալ տեսակի հաշվառումները

1. անհատական եւ քանակական
2. օրական տեղեկագրով
3. խցիկային քարտերով

*(1)*

*Հարց* 3.(04.2206) Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում, ազատազրկման և կարգապահական գումարտակում պահելու ձևով պատժի փաստացի կրած ժամկետը չի կարող

1. մեկ ամսից պակաս լինել
2. երեք ամսից պակաս լինել
3. մեկ ամսից պակաս լինել

*(2)*

*Հարց* 4.(04.2207) Փակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալը կիսափակ ուղղիչ հիմնարկ կարող է տեղափոխվել

1. նշականված պատժի առնվազն 1/4-ը կրելուց հետո
2. նշականված պատժի առնվազն 1/2-ը կրելուց հետո
3. նշականված պատժի առնվազն 1/3-ը կրելուց հետո

*(1)*

*Հարց* 5.(04.2208) Պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով

1. ոչ մեծ, միջին ծանրության կամ ծանր հանցագործություն կատարելու դեպքում
2. ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարելու դեպքում
3. միջին ծանրության կամ ծանր հանցագործություն կատարելու դեպքում

*(2)*

*Հարց* 6.(04.2209) Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարելու համար ազատազրկում կրող անձի պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով դատապարտյալի կողմից պատժի ոչ պակաս, քան

1. 1/3-ը փաստացի կրելուց հետո
2. 1/2-ը փաստացի կրելուց հետո
3. 1/4-ը փաստացի կրելուց հետո

*(1)*

*Հարց* 7.(04.2210) Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելը որպես լրացուցիչ պատիժ նշանակված լինելու դեպքում դատապարտյալի վարորդական իրավունքի վկայականը պահվում է անձնական գործում և հիմնական պատժից ազատվելուց հետո՝ դատավճռի հետ

1. հանձնվում է դատապարտյալին
2. ուղարկվում է քրեակատարողական վարչության արխիվ
3. ուղարկվում է դատապարտյալի բնակության վայրի այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանում

*(3)*

*Հարց* 8.(04.2211) Դատավճիռն ի կատար ածելու մասին կարգադրությունն ստանալուց հետո, դատապարտյալին մշտական բնակության վայրի հաշվառումից հանելու վերաբերյալ հաղորդումն ուղարկվում է

1. քրեակատարողական հիմնարկի տեղակայման տարածքային անձնագրային բաժին
2. ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն
3. բնակության վայրի ոստիկանության բաժին

*(1)*

*Հարց* 9.(04.2212) Դատապարտյալի ազատվելուց հետո նրա անձը հաստատող փաստաթուղթը

1. վերադարձվում է դատարան
2. կցվում է արխիվային անձնական գործին
3. հանձնվում է ազատվողին

*(3)*

*Հարց* 10.(04.2213) Եթե կալանավորված անձի կալանքի տակ պահելու ժամկետը լրանում է, ապա 7 օր առաջ կալանավորված անձանց և դատապարտյալների հաշվառման բաժնի աշխատակիցը պարտավոր է

1. հաղորդում ուղարկել փաստաբանին
2. հաղորդում ուղարկել քրեական գործի վարույթն իրականացնող մարմնին
3. հաղորդում ուղարկել դատախազին

*(2)*

*Հարց* 11.(04.2214) Դատապարտյալների անձնական գործերը պահվում են

1. մետաղական պահարանում՝ այբբենական կարգով
2. մետաղական պահարաններում՝ ըստ պատժաչափերի
3. այբբենական կարգով

*(3)*

*Հարց* 12.(04.2215) Դատապարտյալի հաշվառման քարտը պահվում է

1. պահարանում՝ այբբենական կարգով
2. քարտադարանում՝ այբբենական կարգով
3. անձնական գործում

*(2)*

*Հարց* 13.(04.2216) Ցմահ ազատազրկման ձեւով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե փաստորեն կրել է ազատազրկման

1. ոչ պակաս, քան 20 տարին
2. ոչ պակաս, քան 30 տարին
3. ոչ պակաս, քան 25 տարին

*(1)*

*Հարց* 14.(04.2217) Քրեակատարողական հիմնարկներից ազատված դատապարտյալների անձնական գործերը պետք է ուղարկվեն քրեակատարողական վարչության արխիվ

1. 3 ամսվա ընթացքում
2. 2 ամսվա ընթացքում
3. 1 ամսվա ընթացքում

*(3)*

*Հարց* 15.(04.3280) Ռեցիդիվի դեպքում կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալը կիսաբաց ուղղիչ հիմնարկ կարող է տեղափոխվել նշանակված պատժի առնվազն

1. 1/4-ը կրելուց հետո
2. 1/2-ը կրելուց հետո
3. 1/3-ը կրելուց հետո

*(3)*

*Հարց* 16.(04.2228) Դատապարտյալին պայմանական-վաղաժամկետ ազատելիս ղեկավարվում են ՀՀ քրեական օրենսգրքի

1. 60-րդ հոդվածով
2. 76-րդ հոդվածով
3. 49-րդ հոդվածով

*(2)*

*Հարց* 17.(04.2230) Դատապարտյալին քրեակատարողական հիմնարկ ընդունելուց հետո ԴԱՀԿ-ի կողմից ուղարկված կատարողական թերթիկը

1. պահվում է քրեակատարողական հիմնարկի հաշվառման բաժնում
2. գրավոր հայտնվում է քրեակատարողական հիմնարկի հաշվապահություն
3. պահվում է դատապարտյալի անձնական գործում

*(2)*

*Հարց* 18.(04.2232) Որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անչափահասը մինչև պատժի ժամկետը լրանալը պատիժը կրում է միևնույն ուղղիչ հիմնարկում, բայց ոչ ավելի, քան նրա

1. տասնութ տարեկան դառնալը
2. քսանմեկ տարեկան դառնալը
3. քսաներկու տարեկան դառնալը

*(2)*

*Հարց* 19.(04.2233) Դատապարտյալի անձնական գործին կարող է ծանոթանալ

1. միայն նման լիազորություն ունեցող անձը
2. դատապարտյալը և միայն նման լիազորություն ունեցող անձը
3. միայն նման լիազորություն ունեցող անձը և դատապարտյալի հարազատները

*(2)*

*Հարց* 20.(04.2702) Պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը որոշում է

1. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովը
2. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը
3. ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետը

*(1)*

*Հարց* 21.(04.2703) Բաց տիպի ուղղիչ հիմնարկ նշանակվում են
1. անզգուշությամբ կատարած հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտվածները
2. ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտվածները
3. ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտվածները

*(1)*

*Հարց* 22.(04.2704) Կիսափակ ուղղիչ հիմնարկ նշանակվում են
1. առանձնապես ծանր հանցագործության համար տասը տարուց պակաս ժամկետով առաջին անգամ դատապարտվելու կամ ռեցիդիվի կամ վտանգավոր ռեցիդիվի դեպքում
2. ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտվածները
3. անզգուշությամբ կատարած հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտվածները

*(1)*

*Հարց* 23.(04.2705) Կիսաբաց ուղղիչ հիմնարկ նշանակվում են
1. դիտավորյալ ոչ մեծ, միջին ծանրության կամ ծանր հանցագործության համար առաջին անգամ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտվածները
2. առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտվածները
3. անզգուշությամբ կատարած հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտվածները

*(1)*

*Հարց* 24.(04.2706) Փակ տիպի ուղղիչ հիմնարկ նշանակվում են
1. առանձնապես ծանր հանցագործության համար տասը տարուց պակաս ժամկետով առաջին անգամ դատապարտվելու կամ ռեցիդիվի կամ վտանգավոր ռեցիդիվի դեպքում

2. դիտավորյալ ոչ մեծ, միջին ծանրության կամ ծանր հանցագործության համար առաջին անգամ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտվածները

3. առանձնապես ծանր հանցագործության համար տասը տարուց ավելի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտվելու, ինչպես նաեւ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում

*(3)*

*Հարց* 25.(04.2707) Ցմահ ազատազրկման չեն կարող դատապարտվել

1. հանցանքը կատարելիս քսան տարին չլրացած անձինք
2. հանցանքը կատարելիս տասնութ տարին չլրացած անձինք
3. հանցանքը կատարելու ժամանակ մանկահասակ երեխա ունեցող անձինք

*(2)*

*Հարց* 26.(04.2708) Միջին ծանրության հանցագործության համար անչափահասի նկատմամբ նշանակվում է ազատազրկում

1. առավելագույնը յոթ տարի ժամկետով
2. առավելագույնը հինգ տարի ժամկետով
3. առավելագույնը երեք տարի ժամկետով

*(3)*

*Հարց* 27.(04.2709) Մինչեւ տասնվեց տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար անչափահասի նկատմամբ նշանակվում է ազատազրկում

1. առավելագույնը տասը տարի ժամկետով
2. առավելագույնը յոթ տարի ժամկետով
3. առավելագույնը հինգ տարի ժամկետով

*(2)*

*Հարց* 28.(04.3281) Վտանգավոր ռեցիդիվի դեպքում կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալը կիսաբաց ուղղիչ հիմնարկ կարող է տեղափոխվել նշանակված պատժի առնվազն

1. 1/4-ը կրելուց հետո
2. 1/2-ը կրելուց հետո
3. 1/3-ը կրելուց հետո

*(2)*

*Հարց* 29.(04.3282) Առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալը կիսաբաց ուղղիչ հիմնարկ կարող է տեղափոխվել նշանակված պատժի առնվազն

1. 1/2-ը կրելուց հետո
2. 1/4-ը կրելուց հետո
3. 1/3-ը կրելուց հետո

*(1)*

*Հարց* 30.(04.3283) Դիտավորությամբ ոչ մեծ կամ միջին ծանրության կամ ծանր հանցագործության համար առաջին անգամ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված և կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալը բաց ուղղիչ հիմնարկ կարող է տեղափոխվել նշանակված պատժի առնվազն

1. 1/2-ը կրելուց հետո
2. 1/4-ը կրելուց հետո
3. 1/3-ը կրելուց հետո

*(3)*

*Հարց* 31.(04.3284) Ռեցիդիվի կամ վտանգավոր ռեցիդիվի դեպքում կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալը բաց ուղղիչ հիմնարկ կարող է տեղափոխվել նշանակված պատժի առնվազն

1. 1/4-ը կրելուց հետո
2. 1/2-ը կրելուց հետո
3. 1/3-ը կրելուց հետո

*(2)*

*Հարց* 32.(04.3285) Առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալը բաց ուղղիչ հիմնարկ կարող է տեղափոխվել նշանակված պատժի առնվազն

1. 2/3-ը կրելուց հետո
2. 1/3-ը կրելուց հետո
3. 1/2-ը կրելուց հետո

*(1)*

*Հարց* 33.(04.3286) Դատապարտյալի ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու դեպքում ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի

1. 100-րդ հոդվածով
2. 101-րդ հոդվածով

3. 102-րդ հոդվածով

*(3)*

*Հարց* 34.(04.3287) Ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող անձը փակ ուղղիչ հիմնարկից կիսափակ ուղղիչ հիմնարկ կարող է տեղափոխվել նշանակված պատժի առնվազն

1. 20 տարին կրելուց հետո
2. 30 տարին կրելուց հետո
3. 25 տարին կրելուց հետո

*(1)*

*Հարց* 35.(04.3288) Ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող անձը կիսափակ ուղղիչ հիմնարկից կիսաբաց ուղղիչ հիմնարկ կարող է տեղափոխվել նշանակված պատժի առնվազն

1. 20 տարին կրելուց հետո
2. 30 տարին կրելուց հետո
3. 25 տարին կրելուց հետո

*(3)*

*Հարց* 36.(04.3289) Կալանավորված անձի և դատապարտյալի անձնական գործում պահվող փաստաթղթերը պետք է լինեն

1. կարված, համարակալված և ցուցակագրված
2. կարված և համարակալված
3. կարված և ցուցակագրված

*(1)*

*Հարց* 37.(04.3290) Կալանավորված անձանց և դատապարտյալների քանակական հաշվառումը կատարվում է

1. վիճակագրական ամսական և եռամսյակային հաշվետվություններով
2. վիճակագրական ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններով
3. վիճակագրական ամսական և տարեկան հաշվետվություններով

*(2)*

*Հարց* 38.(04.3291) Քրեակատարողական հիմնարկներում տեխնիկատնտեսական սպասարկման կամ այլ աշխատանքներ կատարելու համար կարող է ներգրավվել, դիտավորությամբ կատարած հանցագործության համար

1. առավելագույնը յոթ տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձը, որը պատիժը պետք է կրի կամ կրում է կիսաբաց կամ կիսափակ ուղղիչ հիմնարկում

2. առավելագույնը հինգ տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձը, որը պատիժը պետք է կրի  կամ կրում է կիսաբաց կամ կիսափակ ուղղիչ հիմնարկում
3. առավելագույնը տասը տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձը, որը պատիժը պետք է կրի  կամ կրում է կիսաբաց կամ կիսափակ ուղղիչ հիմնարկում

*(1)*

*Հարց* 39.(04.3292) Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով պատիժը կատարող հիմնարկի վարչական հանձնաժողովի կողմից դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու հարցը մերժվելու դեպքում, կարող է կրկին քննարկվել մերժվելուց

1. երկու ամիս անց
2. երեք ամիս անց
3. վեց ամիս անց

*(2)*

*Հարց* 40.(04.3293) Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով պատիժը կատարող հիմնարկի վարչական հանձնաժողովի կողմից դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու հարցը հետաձգվելու դեպքում, կարող է կրկին քննարկվել հետաձգվելուց

1. երեք ամիս անց
2. երկու ամիս անց
3. վեց ամիս անց

*(2)*

*ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ*

**Գործառութային պարտականություններ**

**Կրտսեր**

*Հարց* 1.(04.3401) Քրեակատարողական հիմնարկներում պահվող մեկ կալանավորված անձին կամ դատապարտյալին մեկ օր պահելու համար բնական գազի սահմանաչափը՝ ջեռուցման և տաք ջրամատակարարման համար

1. երկու խորանարդ մետր
2. 1.5 խորանարդ մետր
3. մեկ խորանարդ մետր

*(3)*

*Հարց* 2.(04.3402) Քրեակատարողական հիմնարկներում պահվող մեկ կալանավորված անձին կամ դատապարտյալին մեկ օր պահելու համար էլ. էներգիայի սահմանաչափը՝ ջեռուցման և տաք ջրամատակարարման համար

1. 7 կվտ
2. 8 կվտ
3. 9 կվտ

*(2)*

*Հարց* 3.(04.3403) Քրեակատարողական հիմնարկներում պահվող մեկ կալանավորված անձին կամ դատապարտյալին մեկ օր պահելու համար էլ. էներգիայի սահմանաչափը՝ / առանց ջեռուցման և տաք ջրամատակարարման համար ծախսվող էլեկտրաէներգիայի/

1. 5 կվտ
2. 7 կվտ
3. 9 կվտ

*(1)*

*Հարց* 4.(04.3367) Դատապարտյալների համար նախատեսված բնակելի տարածության նվազագույն չափաքանակը

1. 4,5 քառ.մ
2. 2,5 քառ.մ
3. 4,0 քառ.մ

*(3)*

*Հարց* 5.(04.3368) Մեկ դատապարտյալին օրական հասանելիք ջրի նորմատիվային ծախսը

1. 230,0լ
2. 180,0լ
3. 164,0լ

*(2)*

*Հարց* 6.(04.3369) Քրեակատարողական ծառայության կապի միջոցների տեսակների, քանակի և կապի ծառայությունների, ինչպես նաև կոմունալ ծախսերի նորմաները կարգավորվում են

1. ՀՀ կառավարության 16.06.2005 թ. թիվ 896-Ա որոշմամբ
2. ՀՀ կառավարության 01.06.2005 թ թիվ 1001-Ն որոշմամբ
3. ՀՀ կառավարության 31.07.2003 թ. թիվ 961-Ն որոշմամբ

*(1)*

*Հարց* 7.(04.3370) Կալանավորված անձը կամ դատապարտյալը լոգանք կամ ցնցուղ պետք է ընդունի

1. ամիսը երկու անգամ
2. առնվազն յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ
3. առնվազն յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ անգամ

*(2)*

*Հարց* 8.(04.3371) Կալանավորված անձի կամ դատապարտյալի ցնցուղով լոգանք ընդունելու տևողությունը պետք է կազմի

1. առնվազն 25 րոպե
2. առնվազն 5 րոպե
3. առնվազն 15 րոպե

*(3)*

*Հարց* 9.(04.3372) Քրեակատարողական հիմնարկներում արդյունաբերական լվացքի մեքենայի և չորացնող թմբուկի շահագործման ժամկետն է

1. 5 տարի
2. 10 տարի
3. 8 տարի

*(3)*

*Հարց* 10.(04.3373) Քրեակատարողական հիմնարկներում արդուկող մեքենայի և մետաղական մահճակալի շահագործման ժամկետն է

1. 8 տարի
2. 9 տարի
3. 10 տարի

*(1)*

*Հարց* 11.(04.3374) Քրեակատարողական հիմնարկներում ախտահանիչ խցիկի և ուղղանկյուն սեղանի շահագործման ժամկետն է

1. 5 տարի
2. 8 տարի
3. 10 տարի

*(2)*

*Հարց* 12.(04.3375) Քրեակատարողական հիմնարկներում փայտյա մահճակալի և պահարանի շահագործման ժամկետն է

1. 8 տարի
2. 9 տարի
3. 10 տարի

*(1)*

*Հարց* 13.(04.3376) Քրեակատարողական հիմնարկներում կենցաղային լվացքի մեքենայի շահագործման ժամկետն է

1. 5 տարի
2. 8 տարի
3. 10 տարի

*(1)*

*Հարց* 14.(04.3377) Քրեակատարողական հիմնարկներում կենցաղային պահարանիկի, աթոռակի և շարժական աստիճանի շահագործման ժամկետն է

1. 4 տարի
2. 5 տարի
3. 6 տարի

*(2)*

*Հարց* 15.(04.3378) Քրեակատարողական հիմնարկներում բանջարեղեն կտրող մեքենայի և էլեկտրական սալօջախի /մինչև 1մ2 մակերեսով/ շահագործման ժամկետն է

1. 5 տարի
2. 6 տարի
3. 8 տարի

*(1)*

*Հարց* 16.(04.3379) Քրեակատարողական հիմնարկներում ճաշի սեղանի /նստարանների հետ միասին/ և կոշտ աթոռի շահագործման ժամկետն է

1. 3 տարի
2. 4 տարի
3. 5 տարի

*(3)*

*Հարց* 17.(04.3380) Քրեակատարողական հիմնարկներում հաց կտրող մեքենայի և ճաշեփման կաթսայի /գազային/ շահագործման ժամկետն է

1. 4 տարի
2. 6 տարի
3. 8 տարի

*(1)*

*Հարց* 18.(04.3381) Քրեակատարողական հիմնարկներում կիսափափուկ աթոռի և չուգունե թավայի շահագործման ժամկետն է

1. 3 տարի
2. 4 տարի
3. 5 տարի

*(2)*

*Հարց* 19.(04.3382) Քրեակատարողական հիմնարկներում մազ խուզելու էլեկտրական և մեխանիկական մեքենայի շահագործման ժամկետն է

1. 3 տարի
2. 4 տարի
3. 5 տարի

*(1)*

*Հարց* 20.(04.3383) Քրեակատարողական հիմնարկներում ալյումինե կաթսայի /ձուլած, 9.5լ./ և ալյումինե թեյնիկի /ձուլած, 5լ./ շահագործման ժամկետն է

1. 3 տարի
2. 4 տարի
3. 5 տարի

*(1)*

*Հարց* 21.(04.3384) Պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետը / 7,5 հազ.կմ տարեկան միջին վազքի դեպքում /

1. 3 տարի
2. 3 տարի 6 ամիս
3. 4 տարի

*(3)*

*Հարց* 22.(04.3385) Պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետը /10 հազ.կմ տարեկան միջին վազքի դեպքում/

1. 3 տարի
2. 3 տարի 7ամիս
3. 4 տարի

*(2)*

*Հարց* 23.(04.3386) Պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետը /15 հազ.կմ տարեկան միջին վազքի դեպքում/

1. 1 տարի 5 ամիս
2. 2 տարի
3. 3 տարի

*(3)*

*Հարց* 24.(04.3387) Պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետը / 20 հազ.կմ տարեկան միջին վազքի դեպքում/

1. 1 տարի 8 ամիս
2. 2 տարի
3. 2 տարի 8ամիս

*(3)*

*Հարց* 25.(04.3388) Պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետը / 25 հազ.կմ տարեկան միջին վազքի դեպքում/

1. 1 տարի 5 ամիս
2. 2 տարի
3. 2 տարի 5ամիս

*(3)*

*Հարց* 26.(04.3389) Պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետը / 30 հազ.կմ տարեկան միջին վազքի դեպքում/

1. 1 տարի 3 ամիս
2. 2 տարի

3. 2 տարի 3 ամիս

*(3)*

*Հարց* 27.(04.3390) Պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետը / 35 հազ.կմ տարեկան վազքի դեպքում/

1. 1 տարի 6 ամիս
2. 2 տարի 1ամիս
3. 2 տարի

*(2)*

*Հարց* 28.(04.3391) Պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետը / 40 հազ.կմ տարեկան միջին վազքի դեպքում/

1. 2 տարի
2. 2 տարի 1 ամիս
3. 3 տարի

*(1)*

*Հարց* 29.(04.3392) Պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետը / 45 հազ.կմ տարեկան միջին վազքի դեպքում/

1. 1 տարի 11 ամիս
2. 2 տարի
3. 2 տարի 1 ամիս

*(1)*

*Հարց* 30.(04.3393) Քրեակատարողական ծառայության համար փոստային կապի ծառայության ձեռքբերման ծախսերի տարեկան սահմանաչափ սահմանվում է ամսական նվազագույն աշխատավարձի

1. 100-պատիկը
2. 200-պատիկը
3. 250-պատիկը

*(2)*

*Հարց* 31.(04.3394) Կալանավորված անձի կամ դատապարտյալի կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ ապահովվում է նաև

1. Հայաստանի Հանրապետության բջջային ցանցի օպերատորների միջոցով
2. քարտաֆոնային կապի միջոցով
3. ինտերնետ կապի միջոցով

*(2)*

*Հարց* 32.(04.3395) Կալանավորված անձի կամ դատապարտյալի հեռախոսակապից օգտվելու տևողությունը յուրաքանչյուր դեպքում չի կարող գերազանցել

1. 15 րոպեն
2. 20 րոպեն
3. 25 րոպեն

*(1)*

*Հարց* 33.(04.3396) Քրեակատարողական վարչության համար հատուկ հեռախոսակապի, ռադիոկապի և ինտերնետային կապի ծառայությունների ձեռքբերման ծախսերի չափը որոշվում է ըստ

1. հեռախոսահամարների քանակի
2. ծառայողների քանակի
3. կնքված պայմանագրերի

*(3)*

*Հարց* 34.(04.3397) Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը կարող է երկարացնել կալանավորված անձի կամ դատապարտյալի հեռախոսակապից օգտվելու տևողությունը

1. 5 րոպեով
2. 10 րոպեով
3. 15 րոպեով

*(2)*

*Հարց* 35.(04.3398) Կալանավորված անձին կամ դատապարտյալին հեռախոսակապից օգտվելու հնարավորությունը տրամադրվում է սահմանված ժամանակացույցով՝ հաստատված

1. արդարադատության նախարարության կողմից
2. քրեակատարողական վարչության պետի կողմից
3. քրեակատարողական հիմնարկի պետի կողմից

*(3)*

*Հարց* 36.(04.3399) Մարդատար փոխադրամիջոցների ռետինե ավտոդողերի սահմանված նորմատիվային վազքը

1. 30-45 հազ.կմ
2. 40-50 հազ.կմ
3. 45-55 հազ.կմ

*(2)*

*Հարց* 37.(04.3400) Զմռան ժամանակահատվածում փոխադրամիջոցների վառելիքի տոկոսային աճը

1. 10 %
2. 11,5 %
3. 15 %

*(1)*

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

**Գործառութային պարտականություններ**

*Հարց* 1.(04.2293) «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվապահական հաշվառումը

1. կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ, դրամական արտահայտությամբ, տեղեկատվության հավաքման, գրանցման եւ ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր եւ անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով
2. կազմակերպության ակտիվների վերաբերյալ տեղեկատվության հավաքման, գրանցման եւ ընդհանրացման համակարգ է
3. կազմակերպության պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ տեղեկատվության հավաքման, գրանցման եւ ընդհանրացման համակարգ է

*(1)*

*Հարց* 2.(04.2294) Գլխավոր ֆինանսիստն ապահովում է պետական մարմնի կողմից

1. տնտեսական գործառնությունների նկատմամբ իրականացվող վերահսկողության սահմանումը

2. հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների կազմումը եւ ներկայացումը

3. ֆինանսական կառավարման համակարգերի առկայությունը, գնումների մասին օրենսդրությանը համապատասխան՝ գնումների համակարգի առկայությունը

*(3)*

*Հարց* 3.(04.2295) Պետական մարմնի գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է

1. բյուջեով նախատեսված միջոցների բաշխումն ապահովելու համար

2. պետական մարմնի տրամադրության տակ գտնվող ֆինանսական միջոցների արդյունավետ եւ հրապարակային օգտագործման համար

3. միջոցների վատնումը, չնախատեսված ծախսերի կատարումը կանխելու համար

*(2)*

*Հարց* 4.(04.2297) Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեն կազմված է

1. ՀՀ պետական, համայնքների եւ սոցիալական ապահովության պետական հիմնադրամի բյուջեներից

2. ՀՀ պետական եւ համայնքների բյուջեներից

3. ՀՀ պետական, համայքների, սոցիալական ապահովության պետական հիմնադրամի բյուջեներից եւ պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցներից

*(2)*

*Հարց* 5.(04.2298) Հայաստանի Հանրապետությունում բյուջետային տարին սկսվում է

1. բյուջետային գործընթացը սկսելու մասին ՀՀ վարչապետի որոշման հիման վրա

2. յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքն ընդունվելու հրապարակման օրվանից

3. յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին

*(3)*

*Հարց* 6.(04.2299) Տվյալ բյուջետային տարվա համար բյուջետային գործընթացն ավարտվում է

1. տվյալ բյուջետային տարվա բյուջետային գործընթացն ավարտելու մասին ՀՀ վարչապետի որոշման հիման վրա

2. տվյալ բյուջետային տարվա բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունը հաստատվելու օրը

3. տվյալ տարվա դեկտեմբերի 31-ին

*(2)*

*Հարց* 7.(04.2300) Բյուջետային մուտքերը ներառում են

1. տվյալ բյուջեի համար օրենքով սահմանված եկամուտները եւ բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը

2. տվյալ բյուջեի համար օրենքով սահմանված եկամուտները եւ տրամադրված բյուջետային վարկերի եւ փոխատվությունների վերադարձից ստացվող, ինչպես նաեւ փոխառու եւ ներգրավված այլ դրամական միջոցները

3. տվյալ բյուջեին օրենքով ամրագրված բյուջետային եկամուտները, բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, բյուջեից տրամադրված բյուջետային վարկերի և փոխատվությունների գումարների վերադարձից, ոչ դրամային տեսքով այլ ֆինանսական ակտիվների և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող, ինչպես նաև ներգրավված փոխառու և այլ դրամական միջոցները

*(3)*

*Հարց* 8.(04.2301) Բյուջետային ելքերը ներառում են

1. բյուջետային ծախսերը /ընթացիկ եւ կապիտալ ծախսեր, ինչպես նաեւ բյուջետային վարկերի ու փոխատվությունների տրամադրման ծախսեր/

2. ճիշտ պատասխանը բացակայում է

3. բյուջետային ծախսերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների (բացառությամբ բյուջեների միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի) ձեռքբերումները և ներգրավված փոխառու միջոցների մարումները

*(3)*

*Հարց* 9.(04.2304) Բյուջետային տարվան հաջորդող տարվա առաջին ամսվա ընթացքում նախորդ բյուջետային տարվա պարտավորությունների գծով գործառնությունների ձևակերպումը / եզրափակիչ շրջանառություն/ կարող է շարունակվել

1. ՀՀ նախագահի հրամանագրով

2. ՀՀ կառավարության որոշմամբ

3. ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ

*(2)*

*Հարց* 10.(04.2305) ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի մեծությունը չի կարող գերազանցել

1. տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված ծախսերի հինգ տոկոսը
2. նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի փաստացի ծախսերի հինգ տոկոսը
3. տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված եկամուտների հինգ տոկոսը

*(1)*

*Հարց* 11.(04.2306) Պետական բյուջեի նախագիծը բաղկացած է
1. ՀՀ կառավարության բյուջետային ուղերձից եւ պետական բյուջեի մասին օրենքի նախագծից
2. ՀՀ կառավարության բյուջետային ուղերձից, պետական բյուջեի մասին օրենքի նախագծից, պետական բյուջեի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացված՝ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունից
3. պետական բյուջեի մասին օրենքի նախագծից եւ պետական բյուջեի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացված՝ ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունից

*(2)*

*Հարց* 12.(04.2307) Պետական բյուջեի կատարման հսկողությունն իրականացնում է
1. ՀՀ ազգային ժողովը
2. ՀՀ կառավարությունը
3. ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը

*(2)*

*Հարց* 13.(04.2308) Պետական բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է
1. ՀՀ վարչապետը
2. ՀՀ կառավարությունը
3. ՀՀ ազգային ժողովը

*(3)*

*Հարց* 14.(04.2309) ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ՀՀ ազգային ժողով է ներկայացնում մինչեւ հաջորդ տարվա
1. մարտի 1-ը
2. ապրիլի 1-ը
3. մայիսի 1-ը

*(3)*

*Հարց* 15.(04.2310) Բյուջեների կատարումն իրականացվում է
1. հաշվեգրման եւ դրամարկղային սկզբունքների համադրմամբ
2. միասնական դրամարկղի սկզբունքի հիման վրա
3. հաշվեգրման սկզբունքով

*(2)*

*Հարց* 16.(04.2312) Պետական ծառայողի հիմնական աշխատավարձի հաշվարկի համար անհրաժեշտ տվյալ պաշտոնին համապատասխան ենթախմբի յուրաքանչյուր սանդղակ բաղկացած է
1. աշխատավարձի 11 մակարդակից
2. աշխատավարձի 12 մակարդակից
3. աշխատավարձի 10 մակարդակից

*(1)*

*Հարց* 17.(04.2313) Պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը սահմանվում է
1. յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով
2. վարչապետի որոշմամբ
3. կառավարության որոշմամբ

*(1)*

*Հարց* 18.(04.2314) Պետական ծառայողների աշխատավարձը 11-րդ մակարդակից
1. սահմանվում է երկու միավոր ավելացում յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ
2. սահմանվում է մեկ միավոր ավելացում յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ
3. մնում է անփոփոխ

*(3)*

*Հարց* 19.(04.2315) Պետական ծառայողների աշխատավարձի 8-10-րդ մակարդակների համար սահմանվում է
1. մեկ միավոր ավելացում յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ
2. մեկ միավոր ավելացում յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ
3. երկու միավոր ավելացում յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ

*(1)*

*Հարց* 20.(04.2316) Պետական ծառայողների աշխատավարձի 1-4-րդ մակարդակների համար սահմանվում է

1. մեկ միավոր ավելացում տարին մեկ անգամ
2. երկու միավոր ավելացում տարին մեկ անգամ
3. մեկ միավոր ավելացում երկու տարին մեկ անգամ

*(1)*

*Հարց* 21.(04.2317) «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ստացվող հարկվող եկամուտը
2. Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) հարկվող եկամուտը
3. Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը

*(2)*

*Հարց* 22.(04.2318) «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով նվազեցվող եկամուտներ են համարվում

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ վճարված բոլոր տեսակի կենսաթոշակները (այդ թվում՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով կուտակային բաղադրիչի շրջանակներում վճարվող կուտակային կ"նսաթոշակն"րը), բացառությամբ սահմանված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչին մասնակցության շրջանակներում վճարված կենսաթոշակների
2. աշխատանքի վարձատրությունը եւ դրան հավասարեցված այլ վճարումները
3. փոխառության դիմաց ստացվող տոկոսը եւ այլ հատուցումը

*(1)*

*Հարց* 23.(04.2319) Հաշվարկված եկամտային հարկը պետական բյուջե է վճարվում

1. ֆիզիկական անձանց եկամուտների հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ
2. ֆիզիկական անձանց եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ
3. ֆիզիկական անձանց եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 10-ից ոչ ուշ

*(1)*

*Հարց* 24.(04.2320) Հարկային գործակալները ֆիզիկական անձանց վճարված եկամուտների , պահված եւ բյուջե փոխանցված եկամտային հարկի գումարների մասին պարտավոր է հարկային մարմին հաշվարկ ներկայացնել

1. հաջորդ ամսվա 20-ից ոչ ուշ

2. հաջորդ ամսվա 10-ից ոչ ուշ
3. հաջորդ ամսվա 25-ից ոչ ուշ

*(1)*

*Հարց* 25.(04.2321) Պետական հիմնարկի գլխավոր հաշվապահը լիազոր մարմնի սահմանած կարգով պատրաստում և հիմնարկի անունից ներկայացնում է ամսական հաշվետվություններ

1. ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն
2. իրեն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունք
3. պետական մարմնի գլխավոր ֆինանսիստին

*(3)*

*Հարց* 26.(04.2323) Այլ պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարման համար հավելավճար վճարվում է

1. չի վճարվում
2. 25 տոկոսի չափով
3. 20 տոկոսի չափով

*(1)*

*Հարց* 27.(04.3258) Կազմակերպության գլխավոր հաշվապահը պատասխանատու է

1. կազմակերպության ակտիվների և պարտավորությունների գույքագրման համար
2. բոլոր տնտեսական գործառնությունների ժամանակին գրանցման համար
3. հաշվապահական հաշվառումը վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար

*(3)*

*Հարց* 28.(04.3259) Կազմակերպության գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի ներկայացման հետ պարտադիր է

1. միայն նյութական պատասխանատուների համար
2. կազմակերպության բոլոր աշխատողների համար
3. մատակարար կազմակերպությունների համար

*(2)*

*Հարց* 29.(04.3260) Ակտիվների և պարտավորությունների գույքագրման անցկացումը պարտադիր է

1. կիսամյակը մեկ
2. յուրաքանչյուր եռամսյակ

3. նյութական պատասխանատու անձի փոփոխման դեպքերում

*(3)*

*Հարց* 30.(04.3262) Քրեակատարողական ծառայողի արտաժամյա ծառայության տևողությունը տարվա ընթացքում չպետք է գերազանցի

1. 100 ժամը
2. 200 ժամը
3. 300 ժամը

*(3)*

*Հարց* 31.(04.2324) Հաստիքային տեղակալներին իրենց անմիջական պետերի պարտականությունների ժամանակավոր կատարման համար հավելավճար

1. վճարվում է 20 տոկոսի չափով
2. չի վճարվում
3. վճարվում է 25 տոկոսի չափով

*(2)*

*Հարց* 32.(04.2325) Հարկային գործակալն ամսական մինչև 120 հազ դրամ հարկվող եկամտից եկամտային հարկը հաշվարկում է

1. հարկվող եկամտի 15.4 տոկոսի չափով
2. հարկվող եկամտի 24.4 տոկոսի չափով
3. հարկվող եկամտի 20.4 տոկոսի չափով

*(2)*

*Հարց* 33.(04.3536) Հարկային գործակալը ամսական 120հազ դրամը գերազանցող (սակայն մինչև 2մլն դրամը չգերազանցող) հարկվող եկամտից եկամտային հարկը հաշվարկում է

1. 29 280 դրամ գումարած 120 հազ. դրամը գերազանցող գումարի 20 տոկոսը
2. 29 280 դրամին գումարած 120 հազ. դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը
3. 29 280 դրամ գումարած 120 հազ. դրամը գերազանցող գումարի 30 տոկոսը

*(2)*

*Հարց* 34.(04.3537) Քրեակատարողական ծառայողների աշխատավարձի հաշվարկման ժամանակ պաշտոնային դրույքաչափի անցումը հերթական մակարդակին կատարվում է աշխատանքային ստաժին համապատասխան

1. տարին լրանալու օրը
2. տարին լրանալու օրվան հաջորդող ամսվա մեկից
3. հաջորդ տարվա հունվարի մեկից

*(2)*

*Հարց* 35.(04.3264) Քրեակատարողական ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու վերջին երկու ամսվա համար ծառայողին վճարվում է

1. պաշտոնային և կոչման դրույքաչափերը
2. դրամական բավարարումը
3. չի վճարվում

*(3)*

*Հարց* 36.(04.3265) Հիմնական աշխատանքի վայրից մինչև 30 կմ հեռավորությամբ այլ վայր մեկնելու կամ անկախ հեռավորությունից հիմնական աշխատավայրից մեկնելու և նույն օրը վերադառնալու դեպքում աշխատողին հատուցվում է

1. փաստացի կատարած ծախսերը
2. միայն ճանապարհածախս
3. ճանապարհածախս և օրապահիկ

*(2)*

## Նյութատեխնիկական ապահովում

**Գործառութային պարտականություններ**

*Հարց* 1.(04.3404) Կալանավորված անձանց և դատապարտյալներին տրվող մակարոնեղենի օրական միջին չափաբաժինը կազմում է

1. 25 գրամ
2. 30 գրամ
3. 40 գրամ
4. 50 գրամ

*(2)*

*Հարց* 2.(04.3405) Քրեակատարողական ծառայողի հանդերձանքի, այդ թվում համազգեստի նկարագիրը, այն տրամադրելու կարգը, ժամկետները և պայմանները հաստատվում է

1. ՀՀ կառավարության 10.04.2003 թ. թիվ -852- Ն որոշմամբ
2. ՀՀ Կառավարության 10.04.2003 թ. թիվ -413- Ն որոշմամբ
3. ՀՀ կառավարության 15.09.2005 թ. թիվ -1728- Ն որոշմամբ

*(3)*

*Հարց* 3.(04.3406) Քրեակատարողական ծառայողների հանդերձանքի ձևերն են

1. տոնական, ամենօրյա, դաշտային
2. ամենօրյա, դաշտային, ձմեռային
3. տոնական, ամենօրյա, ամառային

*(1)*

*Հարց* 4.(04.3407) Քրեակատարողական ծառայողների համազգեստի ձևերից յուրաքանչյուրը բաղկացած է հետևյալ տեսակներից

1. ամառային, ձմեռային, գարնանային
2. ամառային, ձմեռային
3. ամառային, ձմեռային, աշնանային

*(2)*

*Հարց* 5.(04.3408) Քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալներին և կալանավորված անձանց տրվող սննդի հատկացման ճաշացուցակի ձևը հաստատում է

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը
2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը
3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետը

*(2)*

*Հարց* 6.(04.3409) Քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալներին և կալանավորված անձանց անհրաժեշտ սննդամթերքի ցանկը հաստատում է

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը
2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը
3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետը

*(2)*

*Հարց* 7.(04.3410) Քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալներին և կալանավորված անձանց տրվող սննդի հսկողության «ճաշերի պատրաստման քանակի և որակի հսկողության մատյանի» ձևը հաստատում է

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը
2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը
3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետը

*(2)*

*Հարց* 8.(04.2374) Քրեակատարողական հիմնարկների սննդի, հանդերձանքի եւ սանիտարահիգիենիկ պարագաների չափաբաժինները եւ դրանց շահագործման ժամկետները կարգավորվում են

1. ՀՀ Կառավարության 15.10.2015 թ. թիվ 1182- Ն որոշմամբ
2. ՀՀ Կառավարության 31.07.2003 թ թիվ 961- Ն որոշմամբ
3. ՀՀ Կառավարության 10.04.2003 թ. թիվ - 213 -Ն որոշմամբ

*(1)*

*Հարց* 9.(04.2375) Քրեակատարողական հիմնակներում սննդամթերքը մեկը մյուսով փոխարինելու չափաբաժինները կարգավորվում են

1. ՀՀ կառավարության 10.04.2003 թ. թիվ- 852- Ն որոշմամբ
2. ՀՀ կառավարության 31.07.2003 թ. թիվ- 961- Ն որոշմամբ
3. ՀՀ կառավարության 10.04.2003 թ. թիվ- 413- Ն որոշմամբ

*(2)*

*Հարց* 10.(04.2376) Կալանավորված անձանց եւ դատապարտյալներին տրվող հացի օրական միջին չափաբաժինը կազմում է

1. 500 գ
2. 600 գ
3. 700 գ
4. 550 գ

*(1)*

*Հարց* 11.(04.2409) Կալանավորված անձնաց եւ դատապարտյալներին տրվող կարտոֆիլի օրական միջին չափաբաժինը կազմում է

1. 01.07.-01.10.՝ 350 գրամ, 01.10.-01.07.՝ 500 գրամ
2. 01.07.-01.10.՝ 550 գրամ, 01.10.-01.07.՝ 600 գրամ
3. 01.07.-01.10.՝ 500 գրամ, 01.10.-01.07.՝ 350 գրամ
4. 500գ

*(1)*

*Հարց* 12.(04.2410) Կալանավորված անձանց եւ դատապարտյալներին տրվող կարագի կամ այլ կենդանական ճարպերի օրական միջին չափաբաժինը կազմում է

1. 25 գրամ
2. 30 գրամ
3. 15 գրամ
4. 20 գրամ

*(3)*

*Հարց* 13.(04.2411) Քրեակատարողական հիմնարկում պահվող հիվանդներին որպես հավելյալ սնունդ կարող է տրամադրվել

1. բուսական յուղ կամ կարագ, պանիր, վարսակաձավար
2. կարագ, կաթ, ձու, միրգ
3. կարագ, միս, ձուկ

*(1)*

*Հարց* 14.(04.2468) Քրեակատարողական ծառայողը պարտականությունները կատարելիս կրում է

1. քաղաքացիական հագուստ, որն ունի տարբերանշան եւ խորհրդանշան
2. համազգեստ, այդ թվում՝ հանդերձանք
3. համազգեստ չի կրում

*(2)*

*Հարց* 15.(04.2493) Քրեակատարողական հիմնարկում սննդամթերքը պահեստից դուրս է գրվում

1. հիմնարկի պետի բանավոր ցուցումի հիման վրա
2. կաթսայի օրդերի հիման վրա
3. մուտքի ֆակտուրայի հիման վրա

*(2)*

*Հարց* 16.(04.2495) Քրեակատարողական հիմնարկում սննդի կալորիականությունը որոշում եւ համտես է անում

1. ճաշարանի վարիչը
2. բժշկական սպասարկման բաժնի բժիշկը
3. հրավիրված անձ
4. պատասխանատու հերթապահներից մեկը

*(2)*

*Հարց* 17.(04.3025) Քրեակատարողական հիմնարկում դատապարտյալներին և կալանավորված անձանց անհրաժեշտ սննդամթերքի ցանկը գրվում է

1. 4 օրինակից
2. 2 օրինակից
3. 3 օրինակից

*(3)*

*Հարց* 18.(04.3028) Մեկ ծածկոցի օգտագործման ժամկետը քրեակատարողական հիմնարկներում

1. մեկ տարի
2. երկու տարի
3. երեք տարի

*(2)*

*Հարց* 19.(04.3029) Մեկ ներքնակի օգտագործման ժամկետը քրեակատարողական հիմնարկներում

1. մեկ տարի
2. երկու տարի
3. երեք տարի

*(2)*

*Հարց* 20.(04.3030) Մեկ բարձի օգտագործման ժամկետը քրեակատարողական հիմնարկներում

1. մեկ տարի
2. երեք տարի
3. երկու տարի

*(3)*

*Հարց* 21.(04.3031) Ամառային կամ ձմեռային համդերձանքին անցնելը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում հայտարարվում է

1. ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետի հրամանով
2. ՀՀ նախագահի հրամանով
3. ՀՀ արդարադատության նախարարի հրամանով

*(1)*

*Հարց* 22.(04.3411) Քրեակատարողական հիմնարկում օրվա պատրաստված ճաշերի քանակի և որակի հսկողության նպատակով գործող մատյանում ստորագրում են

1. Քրեակատարողական հիմնարկի հերթապահ խմբի օրվա պատասխանատու հերթապահը, բժշկական սպասարկման բաժնի աշխատակիցը և ճաշարանի վարիչը
2. Քրեակատարողական հիմնարկի պետը և քրեակատարողական հիմնարկի պետի օրվա պատասխանատու հերթապահը
3. Քրեակատարողական հիմնարկի պետը և բժշկական սպասարկման բաժնի աշխատակիցը

*(1)*

*Հարց* 23.(04.3412) Քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալների կոշիկի օգտագործման ժամկետը

1. մեկ տարի
2. երկու տարի
3. երեք տարի

*(1)*

*Հարց* 24.(04.3413) Քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալների կիսաճտքավոր կոշիկի օգտագործման ժամկետը

1. մեկ տարի
2. երկու տարի
3. երեք տարի

*(2)*

*Հարց* 25.(04.3414) Քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալներին հասանելիք բամբակյա կիսավերարկուի օգտագործման ժամկետը

1. մեկ տարի
2. երկու տարի
3. երեք տարի

*(2)*

*Հարց* 26.(04.3415) Քրեակատարողական վարչության կենտրոնական պահեստից ստացված ապրանքների մուտքագրումը, պահպանումը և տեսակավորումը քրեակատարողական հիմնարկներում կատարում է

1. Քրեակատարողական հիմնարկի ճաշարանի վարիչը
2. Քրեակատարողական հիմնարկի տնտեսական ապահովման բաժնի կրտսեր մասնագետը /պահեստապետ/
3. Քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահը

*(2)*

*Հարց* 27.(04.3416) Քրեակատարողական հիմնարկների խոհանոցում կամ ճաշարանում հաշվառված գույքի և սարքավորումների նյութական պատասխանատու անձ է համարվում

1. Քրեակատարողական հիմնարկի տնտեսական ապահովման բաժնի կրտսեր մասնագետը /կրպակավարը/

2. Քրեակատարողական հիմնարկի տնտեսական ապահովման բաժնի կրտսեր մասնագետը /պահեստապետ/

3. Քրեակատարողական հիմնարկի տնտեսական ապահովման բաժնի կրտսեր մասնագետը /ճաշարանի վարիչը/

*(3)*

*Հարց* 28.(04.3417) Քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին հանդերձանքով, անձնական հիգիենիայի և անկողնային պարագաներով ապահովեու և հաշվառման աշխատանքներն իրականացնում է

1. ֆինանսական բաժնի պետը
2. ճաշարանի վարիչը
3. տնտեսական ապահովման բաժնի առաջատար մասնագետը

*(3)*

*Հարց* 29.(04.3418) Քրեակատարողական ծառայողի հանդերձանքի նկարագիրը, այն տրամադրելու կրելու կարգը և պայմանները, ինչպես նաև այն կրելու ժամկետները սահմանում է

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը
2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը՝քրեակատարողական վարչության պետի առաջարկությամբ
3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը

*(1)*

*Հարց* 30.(04.3419) Քրեակատարողական ծառայողին հասանելիք կիսավերարկուի ժամկետը

1. երկու տարի
2. երեք տարի
3. չորս տարի
4. հինգ տարի

*(3)*

*Հարց* 31.(04.3420) Քրեակատարողական հիմնարկներում տնտեսական ապահովման բաժնի գործունեության, աշխատանքային ծրագրերը, կիսամյակային և տարեկան հաշվետվությունները կազմում է

1. տնտեսական ապահովման բաժնի պետը հերթապահ խմբի պատասխանատու հերթապահի հետ համատեղ
2. տնտեսական ապահովման բաժնի պետը
3. հերթապահ խմբի պատասխանատու հերթապահը

(2)

*Հարց* 32.(04.3421) Քրեակատարողական հիմնարկներում պահվող հիվանդներին լրացուցիչ տրվում է վարսակաձավար

1. 20 գրամ
2. 40 գրամ
3. 60 գրամ

(1)

*Հարց* 33.(04.3422) Կալանավորված անձանց և դատապարտյալներին տրվող ոսկորով մսի օրական միջին չափաբաժինը կազմում է

1. 100 գրամ
2. 150 գրամ
3. 180 գրամ

(3)

*Հարց* 34.(04.3423) Քրեակատարողական հիմնարկների կենցաղային և խոհանոցային պարագաների ու սարքավորումների շահագործման ժամկետները կարգավորվում են

1. ՀՀ Կառավարության 10.04.2003 թ. թիվ 413-Ն որոշմամբ
2. ՀՀ Կառավարության 31.07.2003 թ. թիվ 961-Ն որոշմամբ
3. ՀՀ Կառավարության 10.04.2003 թ. թիվ 213-Ն որոշմամբ

(2)

*Հարց* 35.(04.3424) Քրեակատարողական հիմնարկներում 0,5 լ ալյումինե բաժակի օգտագործման ժամկետը

1. մեկ տարի
2. երկու տարի
3. երեք տարի

(2)

*Հարց* 36.(04.3425) Քրեակատարողական հիմնարկներում ալյումինե գդալի օգտագործման ժամկետը

1. մեկ տարի
2. երկու տարի
3. վեց ամիս

(3)

*Հարց* 37.(04.3426) Քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձինք կամ դատապարտյալներն իրենց հաշվին կարող են ձեռք բերել սննդամթերք, առաջին անհրաժեշտության և այլ առարկաներ

1. կրպակից
2. ճաշարանից
3. պահեստից

*(1)*

*Հարց* 38.(04.3427) Քրեակատարողական ծառայության որ ստորաբաժանումների քրեակատարողական ծառայողներին է թույլատրվում համազգեստի փոխարեն կրել քաղաքացիական հագուստ

1. բժշկական սպասարկման և սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումների ծառայողները
2. պահպանության ապահովման և անվտանգության ապահովման աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումների ծառայողները
3. տնտեսական ապահովման և ֆինանսական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումների ծառայողները

*(1)*

*Հարց* 39.(04.3428) Փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում դատապարտյալների սննդի ընդունումը, օրվա կարգացուցակով սահմանված ժամերին, կազմակերպվում է

1. ճաշարանում
2. խցերում
3. խոհանոցում

*(2)*

*Հարց* 40.(04.3429) Կիսաբաց և բաց ուղղիչ հիմնարկներում դատապարտյալների սննդի ընդունումը, օրվա կարգացուցակով սահմանված ժամերին, կազմակերպվում է

1. ճաշարանում
2. խցերում
3. խոհանոցում

*(1)*

*Հարց* 41.(04.3430) Տեխնիկատնտեսական սպասարկման կամ այլ աշխատանքներում ներգրավված դատապարտյալներին հասանելիք սնունդը կարող են առանձին ընդունել

1. Քրեակատարողական հիմնարկի պետի թույլտվությամբ
2. Քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահի թույլտվությամբ

3. Քրեակատարողական հիմնարկի տնտեսական ապահովման բաժնի պետի թույլտվությամբ

*(1)*

*Հարց* 42.(04.3431) Քրեակատարողական հիմնարկներում անկողնային պարագաները և դատապարտյալների հանդերձանքը պահեստից դուրս է գրվում

1. հիմնարկի պետի բանավոր ցուցումի հիման վրա
2. կաթսայի օրդերի հիման վրա
3. մուտքի ֆակտուրայի հիման վրա
4. պահեստի ելքի անդորրագրով /ապրանքագրով/

*(4)*

*Հարց* 43.(04.3432) Քրեակատարողական հիմնարկներում կենցաղային, խոհանոցային և հիգիենիկ պարագաները պահեստից դուրս է գրվում

1. կաթսայի օրդերի հիման վրա
2. մուտքի ֆակտուրայի հիման վրա
3. պահեստի ելքի անդորրագրով /ապրանքագրով/

*(3)*

*Հարց* 44.(04.3433) Քրեակատարողական հիմնարկներում գործող կրպակից կամ խանութից դատապարտյալները և կալանավորված անձինք ձեռք են բերում սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ

1. անձնական հաշվում եղած գումարով
2. կանխիկ գումարով
3. հիմնարկի հաշվին

*(1)*

*Հարց* 45.(04.3434) Քրեակատարողական հիմնարկներում գործող կրպակից կամ խանութից թույլատրվող սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաների ցանկը սահմանվում է

1. ՀՀ կառավարության 03.08.2006թ N 1543-Ն որոշմամբ
2. ՀՀ կառավարության 31.07.2003 թ. N 961- Ն որոշմամբ
3. ՀՀ կառավարության 15.09.2005 թ. N 1728-Ն որոշմամբ

*(1)*

*Հարց* 46.(04.3435) Քրեակատարողական հիմնարկներում գործող կրպակից կամ խանութից դատապարտյալները և կալանավորված անձինք ձեռք են բերում սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ՝ ներկայացնելով

1. պահանջագիր
2. հայտ- դիմում
3. ելքի ապրանքագիր

*(1)*

## Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ
Գործառութային պարտականություններ

*Հարց* 1.(04.2192) Քրեակատարողական հիմնարկում սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքները պարտադիր են
1. անչափահասների հետ
2. հաշմանդամ անձանց հետ
3. պատժախուցից տեղափոխված անձանց հետ
4. իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձանց հետ

(1)

*Հարց* 2.(04.2193) Դատապարտյալի վերաբերյալ բնութագիրը կազմվում է
1. միայն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում
2. միայն պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինման ներկայացնելու դեպքում
3. միայն տեխնիկատնտեսական աշխատանքներում ընդգրկվելու դեպքում
4. ըստ նպատակայնության

(4)

*Հարց* 3.(04.2194) Սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքներ դատապարտյալների հետ չեն իրականացվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հետեւյալ պատժի կատարման ժամանակ՝
1. տուգանք
2. ցմահ ազատազրկում
3. ազատազրկում

(1)

*Հարց* 4.(04.2195) Քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների հետ տարվող սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքներում արգելվում է
1. կալանավորված անձանց եւ դատապարտյալի հարազատների հետ հոգեբանական աշխատանքների կատարումը
2. կալանավորված անձի եւ դատապարտյալի հետ փոխհարաբերություններում մասնագիտական հմտությունների օգտագործումը
3. կալանավորված անձանց եւ դատապարտյալների նկատմամբ հիպնոսի մեթոդների կիրառումը
4. կալանավորված անձանց եւ դատապարտյալների հետ աշխատանքում վերջիններիս հուսադրելու նպատակով տեղեկատվություն տրամադրելը

(3)

*Հարց* 5.(04.2199) Դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների փուլերն են
1. նախնական եւ ավարտական
2. կարանտինային, ընթացիկ, ավարտական
3. նախնական, ընթացիկ, ավարտական
4. կարանտինային, ընթացիկ, նախապատրաստական

(3)

*Հարց* 6.(04.2200) Դատապարտյալներն իրենց իրավունքների վերաբերյալ գրավոր իրազեկվում են
1. պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացումից հետո
2. պատժախուց տեղափոխվելուց հետո
3. խմբում տեղաբաշխումից հետո
4. հիմնարկ ընդունումից հետո

(4)

*Հարց* 7.(04.2201) Նախնական փուլում դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքները ներառում են
1. դատապարտյալին իր իրավունքների եւ պարտականությունների, հիմնարկի ներքին կանոնակարգի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելը
2. դատապարտյալի սոցիալական եւ հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելը, ախտորոշելը և կարիքների գնահատումը
3. դատապարտյալին սոցիալ-հոգեբանական համատեղելիության առումով նախնական գնահատական տալը

(1)

*Հարց* 8.(04.3595) Կալանավորված անձանց հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների փուլերն են
1. նախնական և ավարտական
2. կարանտինային, ընթացիկ, ավարտական
3. նախնական, ընթացիկ, ավարտական
4. կարանտինային, ընթացիկ, նախապատրաստական

(3)

*Հարց* 9.(04.2257) Ավարտական փուլում դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքները ներառում են
1. կալանավորված անձանց արտաքին աշխարհի հետ կապը
2. դատապարտյալին ազատման նախապատրաստելու ծրագիր կազմելը և ծրագրով նախատեսված կազմակերպչական բնույթի միջոցառումների կատարումն ապահովելը
3. դատապարտյալի սոցիալական եւ հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելը
4. դատապարտյալին սոցիալ-հոգեբանական համատեղելիության առումով նախնական գնահատական տալը

(2)

*Հարց* 10.(04.2258) Ընթացիկ փուլում դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքները ներառում են
1. դատապարտյալին իր իրավունքների եւ պարտականությունների, հիմնարկի ներքին կանոնակարգի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելը
2. դատապարտյալի սոցիալական եւ հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելը, ախտորոշելը և կարիքների գնահատումը
3. դատապարտյալին սոցիալ-հոգեբանական համատեղելիության առումով նախնական գնահատական տալը
4. կալանավորված անձանց արտաքին աշխարհի հետ կապը

(2)

*Հարց* 11.(04.2259) Ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց կողմից ներկայացված ներման նոր խնդրագրերը ՀՀ նախագահի քննարկմանը կարող են ներկայացվել նախորդ խնդրագրերի մերժման օրվանից
1. մեկ տարի անց
2. երկու տարի անց

3. վեց ամիս անց
(1)

*Հարց* 12.(04.2260) Կալանավորված անձանց եւ դատապարտյալների հետ տարվող սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների սկզբունքներն են
1. օրինականությունը, մարդասիրությունը, անձի իրավունքներն ու ազատությունները, արժանապատվությունը հարգելը, ինչպես նաեւ սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների անհատականացումն ու տարբերակումը
2. պատժի անհատականացումն ու տարբերակումը
3. սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների անհատականացումն ու տարբերակումը
4. օրինականությունը, մարդասիրությունը, անձի իրավունքներն ու ազատությունները, արժանապատվությունը հարգելը
(1)

*Հարց* 13.(04.2261) Ազատազրկված անձի հետ ամուսնության գրանցումը կատարվում է
1. ամուսնացող անձանց ներկայությամբ, ուղղիչ հիմնարկի շենքում
2. ամուսնացող անձանց ներկայությամբ, քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային մարմնում
3. ամուսնացող անձանցից որևէ մեկի ներկայությամբ, ուղղիչ հիմնարկի շենքում
(1)

*Հարց* 14.(04.2262) Դատապարտյալին, անձնական բացառիկ հանգամանքներով, կարճաժամկետ մեկնում կարող է տրամադրվել
1. մինչև 15 օր տևողությամբ՝ չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը /3 օր/
2. մինչև 7 օր տևողությամբ՝ չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը /3 օր/
3. մինչև մեկ ամիս տևողությամբ՝ չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը /3 օր/
(2)

*Հարց* 15.(04.2263) Քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների բաժնի մասնագետը պարտավոր է
1. կազմակերպում է հաշմանդամ անձանց համապատասխան կարգ նշանակելու աշխատանքները
2. հիմնարկի պետին եղրակացություն ներկայացնել կալանավորված անձի կամ դատապարտյալի հոգեբանական համատեղելիության վերաբերյալ
3. միջոցներ ձեռնարկել կալանավորված անձի կամ դատապարտյալի՝ օրենքով եւ այլ իրավական ակտեով նախատեսված իրավունքների ապահովման ուղղությամբ
(3)

*Հարց* 16.(04.2264) Դատապարտյալների երկարատեւ տեսակցությունների ժամանակացույցը հաստատում է
1. քրեակատարողական հիմնարկի խմբի ղեկավարը
2. քրեակատարողական վարչության պետը
3. քրեակատարողական հիմնարկիպետը
(3)

*Հարց* 17.(04.2567) Կալանավորված անձը կամ դատապարտյալը, որպես բացասական հակում ունեցող, հաշվառման վերցվում և հաշվառումից հանվում է
1. քրեակատարողական հիմնարկի պետի որոշմամբ
2. վերահսկող դատախազի որոշմամբ
3. քրեակատարողական վարչության պետի որոշմամբ
(1)

*Հարց* 18.(04.2568) Դատապարտյալի ուղղման գործընթացի ծրագիրը կազմվում է
1. անձնական գործի հիման վրա
2. ախտորոշման հիման վրա
3. գնահատումների հիման վրա
4. բնութագրի հիման վրա
(2)

*Հարց* 19.(04.2569) Դատապարտյալների խմբեր չեն ստեղծվում
1. բաց եւ կիսաբաց ուղղիչ հիմնարկներում
2. փակ ուղղիչ հիմնարկներում
3. կիսափակ եւ փակ ուղղիչ հիմնարկներում
(3)

*Հարց* 20.(04.2570) Կալանավորված անձին կամ դատապարտյալին որպես ինքնավնասման հակում ունեցող հաշվառելու հիմք է հանդիսանում
1. մինչև 1 տարվա ընթացքում երկու և ավելի ինքնավնասման փորձի կամ փաստի վերաբերյալ գրառումներն անձնական գործում
2. անվտանգության ապահովման բաժնի եզրակացությունը
3. մինչև 1 տարվա ընթացքում մեկ անգամ ինքնավնասման փորձի կամ փաստի վերաբերյալ գրառումն անձնական գործում
(1)

*Հարց* 21.(04.2571) Դատապարտյալին սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնում տրամադրելու նպատակահարմարության հարցը չի կարող քննարկվել, եթե առկա չէ
1. դատապարտյալի ձգտումը կանգնել ուղղման ճանապարհին
2. տեղեկանք բնակության վայրից
3. դատապարտյալի անձնագիրը
(3)

*Հարց* 22.(04.2572) Դատապարտյալի սոցիալական վերականգնումը
1. դատապարտյալի հոգեկան առողջության վերականգնումն է
2. հիմնարկում իրականացվող միջոցառումներին եւ հանրօգուտ աշխատանքներին մասնակցությունն է
3. արտաքին աշխարհի հետ շփումների եւ կապի պահպանման եւ բարելավման միջոցով դատապարտյալի անձնային, սոցիալ-հոգեբանական եւ հասարարական կարգավիճակի հաստատումը կամ վերահաստատումն է
(3)

*Հարց* 23.(04.2575) Դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրելու վերաբերյալ դրական որոշում կայացնելու դեպքում նույն օրը այդ մասին գրավոր տեղեկացվում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը
1. քրեակատարողական հիմնարկի պետի որոշման պատճենը և դատապարտյալի անձնագրի պատճենը
2. դատապարտյալի բնութագիրը և տեղեկանք անձնական գործից
3. դատապարտյալի բնութագիրը, անձնագրի պատճենը և տեղեկանք անձնական գործից
4. քրեակատարողական հիմնարկի պետի որոշման պատճենը
(4)

*Հարց* 24.(04.2576) Կալանավորված անձին, որպես փախուստի հակում ունեցող, հաշվառելու հիմք է հանդիսանում
1. նախկինում կատարած փախուստի փորձի կամ փախուստի փաստի վերաբերյալ գրառումներն անձնական գործում

2. բժշկական եզրակացությունը
3. հոգեբանական եզրակացությունը
(1)

*Հարց* 25.(04.2578) Քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի պետը պարտավոր է
1. հետևել անհրաժեշտ մասնագիտական բոլոր փաստաթղթերի լրացման ճշտությունը և ամբողջականությունը
2. կազմակերպել թերթերի, ամսագրերի և այլ պարբերականների ու գրականության ստացումը և դրանք կալանավորված անձանց ու դատապարտյալներին տրամադրումը
3. կազմել կալանավորվածի կամ դատապարտյալի հետ իրականացված սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթեր
(1)

*Հարց* 26.(04.2579) Որոշակի ժամկետով ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը վարչական հանձնաժողովի կողմից հետաձգվելու դեպքում կրկին կարող է դրվել քննարկման հետաձգման որոշման ընդունումից
1. ոչ շուտ, քան երկու ամիս անց
2. ոչ ուշ, քան երկու ամիս անց
3. ոչ ուշ, քան երեք ամիս անց
(1)

*Հարց* 27.(04.2580) Դատապարտյալին որպես փախուստի հակում ունեցող հաշվառելու հիմք են հանդիսանում
1. քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի ցուցումը
2. երկու եւ ավելի դատվածությունների առկայությունը
3. նախկինում կատարած փախուստի փորձի կամ փախուստի փաստի վերաբերյալ գրառումները անձնական գործում
(3)

*Հարց* 28.(04.2581) Որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկելու կարգը սահմանում է
1. ՀՀ կառավարությունը
2. ՀՀ արդարադատության նախարարությունը
3. ՀՀ դատարանները
(1)

*Հարց* 29.(04.2582) Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման վարչական հանձնաժողովի նիստը վարում է
1. հանձնաժողովի նախագահը
2. նիստի քարտուղարը
3. հիմնարկի պետի տեղակալը
(1)

*Հարց* 30.(04.2584) Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հանձնաժողովը հրավիրում է նիստ
1. յուրաքանչյուր ամիս առնվազն երկու անգամ
2. յուրաքանչյուր ամիս մեկ անգամ
3. յուրաքանչյուր ամիս առնվազն երեք անգամ

4. կախված ներկայացվող դատապարտյալների թվի տոկոսային հարաբերությունից
(2)

*Հարց* 31.(04.2585) Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման փաստաթղթերը հանձնաժողովին ներկայացնում է
1. տվյալ դատապարտյալի խմբի ղեկավարը
2. սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի պետը
3. հանձնաժողովի նախագահի տեղակալը
4. հանձնաժողովի քարտուղարը
(3)

*Հարց* 32.(04.2586) Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման նպատակահարմարության վերաբերյալ որոշումներն ընդունվում են
1. փակ քվեարկությամբ, նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ
2. փակ քվեարկությամբ, նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների ձայների երկու երրորդի առկայության դեպքում
3. բաց քվեարկությամբ, նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ
4. բաց քվեարկությամբ եւ հիմնարկի պետի որոշմամբ
(3)

*Հարց* 33.(04.2587) Որոշակի ժամկետով ազատազրկման ձեւով պատիժ կրող դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման ներկայացման հարցը հանձնաժողովի քննարկմանը կրկին կարող է դրվել հանձնաժողովի կողմից «ենթակա չէ ներկայացման» որոշում ընդունելուց ոչ շուտ, քան
1. մեկ ամիս անց
2. երկու ամիս անց
3. երեք ամիս անց
4. վեց ամիս անց
(3)

*Հարց* 34.(04.2588) Ցմահ ազատազրկման դատապարտված անձի պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացման հարցը հանձնաժողովի քննարկմանը կրկին կարող է դրվել հանձնաժողովի կողմից «ենթակա չէ ներկայացման» որոշում ընդունելուց ոչ շուտ, քան
1. մեկ տարի անց
2. մեկ տարի վեց ամիս անց
3. երկու տարի անց
4. վեց ամիս անց
(2)

*Հարց* 35.(04.2590) Դատապարտյալի հետ սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքներ իրականացվում են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հետեւյալ պատիժների կատարման ժամանակ
1. տուգանք, կալանք եւ հանրային աշխատանքներ
2. հանրային աշխատանքներ
3. հանրային աշխատանքներ եւ կալանք
4. կալանք, որոշակի ժամկետով ազատազրկում, ցմահ ազատազրկում
(4)

*Հարց* 36.(04.2591) Քրեակատարողական հիմնարկում սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների խնդիրներն են

1. կալանավորվածների եւ դատապարտյալների հարազատների հետ հոգեբանական աշխատանքների կատարումը
2. կալանավորվածի եւ դատապարտյալի հետ փոխհարաբերություններում մասնագիտական հմտությունների օգտագործումը
3. դատապարտյալներին հասարակության վերինտեգրվելուն նպաստելը
4. կալանավորվածներին եւ դատապարտյալներին վերադաստիակելը

(3)

*Հարց* 37.(04.2593) Ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը վարչական հանձնաժողովի կողմից հետաձգվելու դեպքում կրկին կարող է դրվել քննարկման հետաձգման որոշման ընդունումից

1. ոչ ուշ, քան 1 տարի անց
2. ոչ շուտ, քան 1 տարի անց
3. ոչ ուշ, քան 6 ամիս անց

(2)

*Հարց* 38.(04.2594) Դատապարտյալների ներման խնդրագրերը պատիժը կրելու վայրի վարչակազմի միջոցով ուղարկվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի քննարկման

1. երկշաբաթյա ժամկետում
2. երեք շաբաթվա ժամկետում
3. ընտանեկան խնդիրների ստեղծումը

(1)

*Հարց* 39.(04.2595) Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը սահմանվում է

1. ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի 44-Ն հրամանով
2. ՀՀ կառավարության որոշմամբ
3. ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի 279-Ն հրամանով

(3)

*Հարց* 40.(04.2597) Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հանձնաժողովը կայացրած որոշումը կարող է բողոքարկվել

1. ՀՀ արդարադատության նախարարին
2. ՀՀ Վճռաբեկ դատարանին
3. դատական կարգով
4. վերադասության կարգով

(4)

*Հարց* 41.(04.3294) Դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրելիս սոցիալական վերականգնման բաղադրատարր է

1. քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցությունը
2. ինքնավնասման, փախուստի հակումներից ազատվելը
3. ընտանեկան խնդիրների ստեղծումը

(1)